*Թուղաքի.*

Քամու ճամփին քո (ձեռքի) կանթեղը,  
Վախեցնում եմ, թե հանգչի դեմքիդ շողից:  
Այրված սրտիս ռոտը աշխարհով մեկ է եղել,  
Եթե շեւ զգում, կեցցեն ռունգերդ<sup>262</sup>:

*Ինչպես տեսնում ենք, գեկորատիվ սիրտ պտտակայում այրվող սիրտը իր բազմաթիվ տարրերակներով հերոսի վիճակի մշտական հատկանիշներից մեկն է: Այդ ընդհանրություններում, իհարկե, չենք հերքում պարտից պոեզիայի հետ հնարագոր ծանոթության պարագան, սակայն առաջնային ենք համարում համամարդկային տիպարանության տարրերակը: Երկու գրականությունների բանահյուսությանն էլ հատկանշական է սիրուց այրվելու երևույթը:*

*Երկու պոեզիայում էլ սիրտ էթիկայի պարտազեր որինաչափություններից է սիրահարի արցունքը, որի մի քանի կազուպար-*

260 Օստրի, Դիվան, էջ 188:

261 Կոստանդին Արզնկացի, Ցաղեր, էջ 163:

262 Թուղաքի, Դիվան, էջ 115:

Վան Հատկաներչներով (գույն, շափ, մե) գծագրվում է սեւ-խո  
գրամատիկ կերպարը: Բոլոր ժամանակներում և տշխուհի բոլոր  
ծայրերում սիրել են և արցունք թափել: Հարկ չկա այդ Համա-  
մարզկաշին տիպարանության մեջ կթիկական, տարածաչրջանա-  
շին կամ մեկ այլ առանձնահատկություն փնտրել: Սակայն այս-  
տեղ ուշագրության արժանի է ոչ թե լայն երկույթը, այլ գրա-  
արտահայտության մեներն ու միջոցները:

*Քուչակ.*

Հանցգուցն եմ ի քո սիրուդ,  
Ջինջ ամսերըն կառնին շատափ.  
Ջայդ երկիրն ամէն գիտէ,  
Սիրոյ տէր եմ ճես քեզ պարապ-  
Այս իմ նենգատր աչնրս  
Չի կենար ջգքեզ մեկ պաւ մի պարապ-  
Կուլայ, զօրն ջգքեզ կուզէ...<sup>263</sup>

*Օնսորթ.*

Այն շուրթերը չեմ համբուրի, չնայած ինձ սազական են,  
Քանգի շաքարը հայվում է, երբ այն համտեսում են:  
Իմ աչքերը նրա դարդից *Քակնշուրյում* են անում,  
Հակնթընը (արցունք) են հալեցնում և *թփու*  
(տանջամար դեմք) վրա գլորում<sup>264</sup>:

*Ռուգարթ.*

Իմ աչքերը նրա դարդից որքան *Քակնթընը* ձղկեցին,  
Որ դեմքիս վրա այդ գաղտնիքից  
Ռազար վարդ քայվեց<sup>265</sup>:

*Սիրո տանջանքը տարբեր Համասեքստերում տարբեր գույն  
է ստանում:*

263 Նամահախ Քուլայ, «Հարրոբ ու մեկ հարեն», արարարանը և տողացի  
քարդ, Լ. Լիբուլյան, Երևան, 1976, էջ 16:

264 Օնսորթ, Գիվան, էջ 190:

265 Ռուլայի, Գիվան, էջ 115 (ընդգծումները մօրն են):

Քուչակ կարմիր

Թուղաքի կարմիր

Օնտորի կարմիր

Աչքերի ֆունկցիան առավելապես գործ անելն է:

Քուչակ չեն մնում պարապ

Օնտորի ոսկերչուքյուն են անում

Թուղաքի հակիմքներ են հղկում

Տառապանքի ընդհանուր գույնը կարմիրն է, որը Հայոց մեջ սովորական Համեմատությունքյանք է արտահայտված, իսկ պարսից՝ բարդ քանակե-խորհրդանշերի: Այստեղ ընդհանուր է եսե դե-դիմ գույնը, որը կենդրոնանում է և նյութական և բուսական աշխարհի Համեմատությունքյան առարկաների միջոցով հափրուկ-խունկ, ոսկի և է:

Մուկչիկ.

Ես սուզվում եմ եփրատում, քանի աչքերս կան...<sup>266</sup>

Աբու-ալ Բախի.

Մատները հինա է դնում իմ սրտի արյանք (արցունք)...<sup>267</sup>

Սաադի.

Իմ արցունքը ու քո դեմքը իրար հանգույն են դարձել...<sup>268</sup>

Կամ

Հարյուր աղբյուր իմ աչքերից հեղեցիք ու գնացիր...<sup>269</sup> ևն:

Երգեկացի.

Գու քանի հեռացես ինչպես ի վայր թափես ի աչքերու՝  
Արտասուքն ի վայր թափես ի աչքերու<sup>270</sup>:

266 *Աստօր*, 352.

267 *The Lubab-ul-Arab of Muhammad Awwl*, part second, London, 1903, p. 28.

268 *Մարգարտուշար*, էջ 90:

269 *Նույն տեղում*, էջ 91:

Կամ՝

Լացն ու ճառաչն է զիս պատեր...<sup>271</sup>

Կամ՝

Ջաշիրս արեամբ ճեստ իր քանամ...<sup>272</sup>

Հայ տաղերգուների պոեզիայում առավել ընդգծված է սիրահարի և սիրելչույի հակամարտության ըմբռնումը որպես հիմնական թեմայի, սիրո՞ղ և ծառայի կամ թագուհու և գերու:

*Թշկուբանցի.*

Ես կու գրեմ զիս քեզ մատաղ,  
Ու քեզ ծառայ ու քեզ զաքաթ...<sup>273</sup>

\*\*\*

Տեսդ բծիշկ է ճիւսնդին...<sup>274</sup>

\*\*\*

Ար-եկ ինձ դեղ արայ իմ ճարըն դու ես...<sup>275</sup>

*Երզնկացի.*

Դու ես ճոզի իմ ճոզոյս,  
Խղճա քո գերոյս, իմ լոյս: <sup>276</sup>

\*\*\*

Քո սիրոյդ ճիւսնդ եմ ես,  
Հէքիմ ու ճարակ դու ես <sup>277</sup>;

---

270 Խոստանդին Երզնկացի, Տաղեր, էջ 166:

271 Նույն տեղում, էջ 166:

272 Նույն տեղում, էջ 163:

273 Հովհաննես Թղևորանցի, Տաղեր, էջ 129:

274 Նույն տեղում, էջ 120:

275 Նույն տեղում, էջ 151:

276 Խոստանդին Երզնկացի, Տաղեր, էջ 158:

277 Նույն տեղում, էջ 160:



\*\*\*

Չի գիտե՞ս, որ ծառայ եմ քեզ...<sup>278</sup>

\*\*\*

Մաղկունաց Սուրբանն դու ես ...<sup>279</sup>

\*\*\*

Դու ծաղկանց ես բազավոր՝ վարդի գունով<sup>280</sup>։

\*\*\*

Դու հուրմով փատիշան ես՝ քո եասիրով,  
Եսաիր կամ քո ծառայ՝ զինքն ազատես<sup>281</sup>։

*Ջուրայրի.*

Այն կուրքը, որ բուժում էր համբույրով հիվանդին,  
Ափսոսում է իր դեղը ինձ՝ տառապյալիս<sup>282</sup>։

\*\*\*

Քո գերին սև աչերովդ է հագարտ...

\*\*\*

Դու գեղեցկության շահ ես՝ սիրամարմերդ՝ զորքդ<sup>283</sup> ... եմ։

*Իհարկե, շատ գայթակղիչ է ուղղեցության պապափառը և զյուրին հիմնավորելի, առավել էս, որ Հայոց սիրային քնարերգության քառարանում մի ամբողջական շերտ կա պարսկերեն լեզվով։ Սակայն փորձենք վերջ բերված պատկերները փնտրել մեր կարգերներ, որինակ՝ Նարեկացու պոեզիայում։ Նարեկացին իր սիրեցյալին՝ Լիսուս Փրփսուսին, թագավոր է կոչում, որը բուժում է և ուղղեցնում։*

---

278 Նույն տեղում, էջ 160։

279 Նույն տեղում, էջ 161։

280 Նույն տեղում, էջ 167։

281 Նույն տեղում, էջ 168։

282 Աստօր, 120.

283 Աստօր, 183.

Հայր, թագավոր և այլ փոխարեություններ մեր բանաստեղծություն մուտք են գործել Սուրբ գրքի ազգեցությամբ ստեղծյալ նման բնույթի լեզվական երևույթները միջնադարի մարդու մտածողության համար միս ու արյան նման մի բան են եղել, և ինքնին Հասկանալի է, որ զբանց ընտրության համար մեր քաղաքացիները հատուկ ջանք ու եռանդ չեն գործադրել<sup>284</sup>:

**Թագաւոր զարասոր, երկմատր, տէր Յիսուս Քրիստոս,**

Լուսավորեցայց՝ կրկին ողջացեալ շնչով և մարմնով,  
Ամենայնի կարող և անգամնելի<sup>285</sup>:

Կամ

Ռժշկեա, ամենակարող, զճերքինս և զարտաքինս<sup>286</sup>:

Տվյալ զեղբրում մենք վերանում ենք տաշի կրտական ըմբռնումից. մեզ այս պարագայում հետաքրքրում է մեր պոետիկան: Հակված ենք կարծելու, որ պարտից պոեզիայի հետ որոշ տիպարական ընդհանրություններ արգեն եղել են մեր պոեզիայում, և միջին Հայերենի հետ մուտք գործած պարսկարանությունները, զբան գուժարվելով, հանախ ընդգծված ազգեցության ազգագրություն են ստեղծել:

Ինչի՞ է հասցնում սիրտ պաշտամունքը: Իհարկե, անվիճելի արժեքների նսեմացման: Այդ երևույթի ընդհանրությունը երկու պոեզիաներում կարող է լինել փուլային-տիպարական, քանի որ մի արժեքի ձևավորումը տեղի է ունենում հնի, ընդունվածի հետ հակադրման միջոցով: Նրի ի նկատի ունենանք այն տարածված տեսակետը, որ միջնադարյան մտածողը անվերսուպահարեն ելնում է իր զավանած գաղափարախոսությունից, այսպես սաստիս առաքյալների կարողությունները սիրուհու զերազրելը, անգամ

284 Հմմտ. Վ. Ներսիսյան, Եզգ. աշխ., էջ 94:

285 Գրիգոր Նարեկացի, Մարտիան ողբերգություն, Քամ, ԽՊԿ ա 1:

286 Վ. Նալբանդյանը նշում է, որ դա Ռոզով և մարմնով, Ներքինով և արտաքինով ողջանալու, ամրապնդվելու փափակ է (Ռմմտ. Սրա՝ Գրիգոր Նարեկացի, Սրբաճ, 1990, էջ 205):

եթե տուրք էր տարածված և ընդունված մեխն, անշուշտ միջնա-  
գործի համար ուշադրաժ կերտւոյթ է:

Ջարմանայիորեն Մոհամազ ժարգարիի ամենակարող լինելը  
(իրավամբ Ալլահը ամենակզորն է, իրավամբ Ալլահը իմաստուն  
է, իրավամբ Ալլահը ամենատես է, իրավամբ Ալլահը ամենազո-  
րեղն է) գրգռւմ էր Հարցականի սակ:

Սիրունուն վերագրում էր այն ամենը, ինչին գորու էր  
միայն աստված կամ նրա առաքյալը:

*Օնտորի.*

Ո՛վ դու՝ թուրակի լեզվովդ ու վայրի ցիոի կեցվածքովդ,

Գեղեցկությունդ ամեն մի մնումի կհանի գերեզմանից...<sup>287</sup>

Վերջին առջը մի տարրերակն է «քաղցր լիզուն օձին բնից  
գուրա կքաշի» առածի: Իհարկե, պարսից թարաններում (քառ-  
յակ) այդ զաղափարն ավելի կոպիտ և ուամիկ սեռով է արտա-  
հայտված.

Եթե դու մեռել լվացող ես, ապա ես կմեռնեմ,

Երբ ինձ լվանա քաֆուրով, պատանքս պատռեմ,

մի կուշտ քեզ նայեմ...<sup>288</sup>

*Կամ՝*

Ո՛վ գեղեցկուհիդ, ինձ հետ քնքույշ վերաբերվիր,

Քո պատճառով ես Ալլահին դավանանցի:<sup>289</sup>

*Կամ՝*

Շուրթդ Քարեն է, իսկ ես ուխտագնաց,

Մի գիշերում հարչուր անգամ ուխտագնացություն եմ

կատարում:<sup>290</sup>

287 Օճաթի, Գիվան, էջ 192:

288 Յ. Բ. Жыковскій, Образцы персидского народного творчества, СПб., 1902, стр. 222.

289 Տե՛ս Նեյնի Արդ-ալ Հուսին, «Ֆուկլուր», շեղ-է ավալ, Թեհրան, ա. 13:

Նման Հանդուրժողականությունը գալիս է շարանին արդեն շատ ծանոթ արքունական պոեզիայի արժեքների համակարգից, որտեղ շափազանցությունը առաջնային տեղ էր գրավում, որտեղ սրբերի մակարդակի հասցված ներբողյալը (շահը, էմիրը) միտ ամենահզորն էր, ամենաքաջը, ամենաշուայլը, ամենաարդարը: Սա ինչ որ շափով մարտահրավեր էր Ղորանի Հերոսի ամենաթին, սակայն չէր գիտակցվում, զիտվում էր որպես արքունական էթիկետ: Օրինակ՝ Ջաֆար էրն Մահաժադին եզիրված ներբողում Թուղաքին գրում է.

Թե հրծշտակ տեսնել ուզես, նայիր նրան....

\*\*\*

Անես ճաստատ Սողոմոնն է նստել գահին....

\*\*\*

Նա պահապանն է աստծո, ստվերն է սուրբ....

\*\*\*

Նրան են ենթարկվում Ղորանի սլաթների ... 291 նո:

Գամ սիրային բանաստեղծության մեջ.

Նա, ով նման չէ ոչ ոքի, նա աստվածն է,

Դու աստված չես, սակայն նման չես ոչ ոքի<sup>292</sup>:

Սրբոգիգմին Հատուկ երեք գրույթների միտման եզանակով թարցվում է սիրուհուն աստծուն հավասարեցնելու միտումը: Այդ արամարտական եզրահանգումը կարող էր լինել՝

290 Անուս Այ Ղուսեմ Ֆուդիրի, «Ֆուլլոր», Խարանեհա-յն մահալե-յե Օթուաի, Թեհրան, ս. 26:

291 Թուղաքի, Գիվան, էջ 31-45:

292 Սալիկ-է Նաֆիսի, Մոմթ-է գեմեհեի վա անվալ վա աշար- է Թուղաքի, Թեհրան, 1331, ս. 538:

Աստված նման չէ ոչ ոքի.

Դու նման չես ոչ ոքի.

↓

Դուք (զրահով) նման եք իրար....

Ճիշտ այնպես, ինչպես պարսից պոեզիայի մեափորման Հենց արչալույսին Ռուզարթին արգենն տալիս էր կրոնի նեեմացման և սիրունու առաջնայնության զազափարը, այնպես էլ Հայոց երբ մեափորվող սիրային բանաստեղծությունում այդ միտումը անթաքույց է: «Միջնադարյան պոեզիայում առաջին անգամ Թղևուրանցին է Հայտնում այն միտքը, թե սերն ազնվի ուժեղ է, քան բրբառենեական Հափաթը»<sup>293</sup>:

Խաղանի.

Կրոնն ու աշխարհը, որ ծածկոցն են մեր բարոյականության,  
(Եկեք) գցենք աչք երկուսը, մեր սիրածի տաքերի տակ...<sup>294</sup>

Թղևուրանցի.

Մարդ որ սիրու կու հանդիպի,

Նայ քան ըզկրակ կու լինի վառ,

Այլ ոչ ազօքք միտքըն կու գալ,

Ոչ յալամաուր կարդայ և ճառ<sup>295</sup>:

Պաշտական միջավայրում պարսից բանաստեղծությունը զուտ աշխարհիկ բնույթ էր կրում և զուրկ էր մահճեցական մտնեանգությունից: Սիրունին Հասցվում էր աստվածային բարձրություն, որբավայրերը փոխվում էին Հեթանոսական տաճարով կամ կենդեցով, սիրունու գեմքը Համեմատվում էր սուրբ Քաջիկ Հեռ, որի կողմը գեմքով շրջվում է ամեն մի մահճեցական նամագի մամանակ: Ղարսերի քարոզած անթառեղի արժեքները կասկածի տակ են առնվում:

293 Վ. Նալբանդյան, Միջնադարի Պաղատերգուհիներ, Երևան, 1958, էջ 29:

294 Խաղանի, Դիվան, էջ 643:

295 Հոգնանենու Թղևուրանցի, Պաղեր, էջ 160-161:

Քն դեմքի դեմ Մալսարիլի սուրբ ջրերը ոչինչ են...<sup>296</sup>

*Դիցարանությունից և Նորանից բերված ուզգակի և գուգորգական մեջբերումները Հետապնդում են զուտ գեղացիական նպատակ և Հնու. են կրոնական ըմբռնումից:*

*Սերը մեծ «ավերածությունների» է ենթարկում ոչ միայն մարդուն (գեղեցած գեմք, ազեղ մեջք ևն), այլ նաև բնության և մարդկության կողմից ստեղծածը:*

*Քչկուրանցի.*

Ձեզ Ինչ դատար ես դիմանամ,  
Երբ դուք ի հայ հանէք զլնրունք,  
Սիրով քակէք քարծր քերդեր,  
Ի գիլ հանէք վեմ ու քարունք<sup>297</sup>:

\*\*\*

Լոյս երեսուցի եմ քո փափայք,  
Քաղաք Խուրան Ձին ու մաշին,  
Թէ տեսնուն զվարսն Հնդրստան  
Ընդ որ երթաս յետի կոշին<sup>298</sup>:

*Եթե Հիշենք Նարեկացու, ապա պարզ կգտնեա, որ այդ պատկերները արդեն գոյություն են ունեցել:*

Դու, որ քարերի կարծրությունը ճեղքեցիր,  
Դու, որ տարերքն անգամ սասանեցիր...<sup>299</sup>

*Կարծում ենք, սիրս և կրանի Հակագրությունը մինչև Քչկուրանցիի գոյութուն է ունեցել ժողովրդի ընդերքում և իր առավել վառ արտահայտությունն է գտել Հայրեններում:*

<sup>296</sup> Մալսարիլը դրամաբուրսի հետո գեաԵ է:

<sup>297</sup> Քչկուրանցի, Տաղեր, էջ 142-143:

<sup>298</sup> Նույն տեղում, էջ 134:

<sup>299</sup> Գրիգոր Նարեկացի, Մատան Ողբերգություն, ԼՁ (ք):

Հաճեց.

Երև այն քրքուրին Օրբազցի գրավի իմ սիրտը.

Նրա խալիքն ես կնվիրեմ Մամարդաւանդն ու Բուխարան<sup>300</sup>:

Կամ

Թշուրանցի.

Պագ մի յերեսէդ արժէ գեղցկան

ՋՀապաշ ու զԹաման, զՏիլ ու զՀեղուտան

Երկու վարսդ է գին, է՝ Ձին ու Խուրան

Պուլզար ու զքստամբոյ ու շաճրի Եազաւան...<sup>301</sup>

Գարգվում է, որ պրոֆանսյան արուբազուրներն էլ են Արևելքի և Եվրոպայի ՀանրաՆայտ թագաւորները եվիրել իրենց սիրեցյալին: Գարծում ենք, Ա. Գուրնիշի Համոզիչ տեսական եզրահանգումը շեճապես լուծում է մեզ երկմտանքի մեջ գցող «ազգեցութիւն»<sup>2</sup> և «թիպարանութիւն» Հարցադրումը, մտնափանց, որ այդ երկուսի գոյութիւնն էլ միաժամանակ Հնարափոր է: «Գրոֆանսյան արուբազուրը երգում է իր սիրեցյալին, սակայն չի գտնում և Հափանարար չի էլ փնտրում Հասունկ և շտանձված խոսքեր իր գգացմունքներն արտահայտելու կամ նրա գեղեցկութեան եկարագրութեան Համար: Հասկացութիւնների Համակարգը և իր սգասպորձան տերմինարանութիւնը՝ զուտ սփռատարրական, իրափական տերմինարանութիւն է՝ «ձառայութիւն», «եվիրատութիւն», «փառայական երգում», «սենյար» են: Այդպիսին է սիրային բառապաշարը, որի միջոցով նա վարում է իր սիրային խոստովանութիւնը: Արբուհին նրա Համար Թանկ է տալիս, բան Անգալուզիայի և Արևելքի թագաւորները<sup>302</sup>»:

Թվում է՝ Հարկ չկա նորանոր որինակներին: Արդեն Հասկա-

300 Գեղամ-է խաչն Հաճեց-է Օրբազի, Թեքրան, 1346, ս. 1 (արտոմուտն Հաճեց, Գիվան):

301 Հովնանէս Թշուրանցի, Տաղեր, էջ 156:

302 A. R. Guyon, Oj. azn., էջ 28:

նայի է, որ մեր ուշագրությանն արժանացած տեր-ձառա, Հի-  
 վանդ-բժիշկ, մահ-կյանք բինար գաղափարները արտացոլում են  
 ավատաարժեական կենսամեծի մոգելը: Ավելի դյուրին է գաղա-  
 փարներ, մտաբաներ, բնեմաներ, բանաստեղծական արտահայտ-  
 շումների սցառագործման մեթոդի և այլ նմանությունները վե-  
 րադրել մի գրականության ազդեցությանը մյուսի վրա ուղղակի  
 կամ անուղղակի (միջնորդ) մեոք, Հատկապես այս պարագայում,  
 երբ երկու ժողովուրդները զարերոք խաչակեղ են իրենց պետ-  
 ականությանն ու կենցաղը: Հայ և պարսից բանաստեղծական ար-  
 վեստի բազմաթիվ նմուշներ մեզ նորից ու նորից մտածելու, խոր-  
 Հելու, ճշտելու և վերլուծելու առիթ են տալիս: Հետաքրքիր է  
 Հայրեններում այդ նույն գաղափարների առաջի պարզ արտա-  
 ցումը, որ ցույց է տալիս ժողովրդի ոգուն մտա ստեղծագործու-  
 թյան և պաշտոնական նրբաճաշակ արժեստի փոխազդեցու-  
 թյանը:

Հայրեն՝

Աչերդ դու Քանց ունիս՝ աչք էրէ՝ ձախըն խորովէ,

Ունքներդ դու Քանց ունիս, որ Օիրազն ի Ռիմնէ քակէ...<sup>303</sup>

Իսպառ շենք բացառում նաև ազդեցություններ տարրերա-  
 կը, Հատկապես՝ ստալի գեղագրական գիտակցությանը մերձե-  
 նալու ամենամատչելի մեոք թարգմանության միջոցոք: Հայ  
 գրականության Հուշարձաններից մեկում «Պղնձե քաղաքի պատ-  
 մությունում» պահպանված կաթաններից մեկը, որը Ն. Ակինյանի  
 կողմից քննվում է որպես 10-րդ դարի նմուշ և ունի իրեն կից ար-  
 բարերեն ընկերը<sup>304</sup>, մեր կարծիքոք իր մերկ կառուցվածքոք  
 ուղղակի Համընկնում է Ռուզաբիից մեզ Հասած մի խոհափոխ-  
 ստիպական բանաստեղծության Հեա: Ըստ սրում, Մայիզ Նաֆի-  
 սին, որ Ռուզաբիի քննական տեքստի Հմուտ գիտակ է, կասկածի  
 տակ չի առնում Ռուզաբիի գրվածում պահպանված այս բանա-

303 Ա. Չոպանյան, Հայրեններու քոլուստանը, Փարիզ, 1940, էջ 169:

304 Ցե՛ս Ն. Ակինյան, «Ջրույց սղճն քաղաքի», Համոզես Ամսորնայ, 1958-59,  
 էջ 45:





(ևով իրենաց Հետ փող մե շտրին), ուղղակիորեն Համբնկնում է Հենց հուշի ժողովածուում պահպանված մեկ այլ կաֆայի վերջաբանին.

Զամենն այժմ այլոց թողի

Մեկ զպատանքս առի ու գնացի<sup>306</sup>:

Կարելի է ենթադրել, որ իսկական բնագիրը ունեցողսյայի է ենթարկվել է, ցրիվ զայով գանազան նոր տարրերակներ մեկ: Գուցե այս Հանգամանքը ափելի ամբաստելի է. Արմենյանի այն զբույժը (որը ի զեղ պաշտպանվում է նաև Հ. Միմոնյանի կողմից<sup>307</sup>), թե այդ կաֆաները իսկապես 10-րդ դարում կատարված թարգմանություններ են, որոնցում միջնագարի Հայ թարգմանիչները իրենց ազատ են զգացել և Հեռացել են բնագրից<sup>308</sup>: «Թարգմանություն» կոչվող իրազույթյան միջնագարյան պատկերացումները միշտ չէ, որ Համբնկնում են ժամանակակից շափափիչներին: Միջնագարյան թարգմանիչները ազատ և անկաշկանդ միջամտում էին սուր Հեղինակի անքափն, յուրովի մեկնաբանում էին այն և փոխադրում: «Փոխադրություն» կոչվածը այնքան Հարաբերական էր գառնում, որ կարող էր գուտ աշխարհիկ սանդղապործությունը գուտ Հոգևոր Հազուտ Հազցնել: Օրինակ, «...ան փարիզցի վանական 1467 թ. արտագրել է Օվիգիոսի «Արքա արվեստը» մեկնաբանելով վերջինս ի փոստ Մարիամ սասվաճանին»<sup>309</sup>: Փաստորեն թարգմանվող սանդղապործությունը Հարմարվում էր ժամանակի պոուն և մեկում որպես մի նոր Հուշարձան:

306 -Հանդես (Ննուպուա), Շուք անդում:

307 Տե՛ս Հ. Միմոնյան, Հայ միջնագարյան կաֆաները, Երևան, 1975, էջ 142-51:

308 Օրինակ, 14-րդ դարի պարսկական քարտանջատուական Ռուշարմաններից մեկը՝ «Պարսկագիրքը», ժամանակին թարգմանվել էր սանսկրիտից: Ասկայն թարգմանիչը՝ Ջիլու-ալ-Գեմ Նախչարին, այնպիսի մշակման և խմբակցման է ենթարկել, այնքան է հեռացել բնագրից, որ այն իրավամբ համարվում է վերջինիս սանդղապործությունը:

309 Թագմարիվ են աշխարհիկ անցանդի քարեպաշտական երանց տալու օրինակները եվրոպական Ռուշարմաններում (տե՛ս Շ. Ա. Շաբճյան, Գլխաշին, էջ 209):

Ըստ Պյոթի արևմտյան-արևելյան սինթեզի տեսության՝  
Համաշխարհային գրականությունները «Հրաշալի մեկուսացման»  
մեջ չեն եղել: Այդ է պատճառը, որ և արարական, և պարսկա-  
կան, և բյուզանդական և այլ գրականություններին Հատուկ մի-  
տումներ և երանգներ մուտք են գործել Հայոց պոեզիա, որոնք ոչ  
միայն չէին արգելակում ազգային-ամենզանի գարգացումը,  
այլ որոշ ստուժով նաև խթանում էին այն:

Որպեսզի շատացվի այն տպավորությունը, թե Հայոց և պարսից սիրային քնարերգությունն մեզ նկարագրական մեթոդի կողքին իսպառ բացակայում է Հերոսների Հոգեբանացույցը, ուզում ենք հանզ առնել սակավաթիվ այն նմուշների վրա, որոնք կարծես թե զուրս են գալիս սիրային բանաստեղծության ընդունված կաղապարից: Դրանցում սիրուհին չի երևում, սակայն առկա են նրա հմայքի «Հեռահանքները»: Բանաստեղծականացման առարկան սիրելիի «պատկերից» փոխվում է Հերոսի «պատկեր-Հոգեվիճակի» նկարագրմանը, որում կարծես թե ազոս գծազբվում է շարժում, իրավիճակ: Կոստանդին Երզնկացու և Հովհաննես Թլկուրանցու ստեղծած զեկորատիվ սիրենյայի կողքին երևում է նաև անհաստականությունն առբերը ցուցաբերող Հեռաս:

Ես քո սիրուն չեմ դիմանար, հալալ արա, հանըր մեռայ,  
Առ ի թեո այլ զոսկի փէտատ, ւ նկո փորէ ինձի թուրպայ:

Թող լլոռաման ըզիս գինով, մարուպ բերեն ինձ քահանայ,  
Կամանշ տերեն թող պատնեն՝ տանին թաղեն ի նոր  
պաղշայ:

Ջսիրոս երեցիր ու սղկեցիր ու քաշեցիր լաշքող սուրմա,  
Դարմար գարիւնըս վաթեցիր ւ,  
ի ոտվընից զըրիր թինայ:<sup>310</sup>

Այս սիրո սաղը սեղազբված է Թլկուրանցու մոզովածուր Հուփելվածում և կասկածի տակ է տեսվում նրա պատկանելությունը: Մենք նույնպես ունենք այդ կասկածները, որովհետև ակնհայտ է բառային ֆունզի անհամապատասխանություն Թլկուրանցու բառարանին և ոճին: Նման պարագայում Հետաքրքիր

արգյունք կարող է առջև թշուրահեղ թուր աստիճանի հանախահանութան բառարանի կազմումը: Այս բանաստեղծությունը արվելի մաս է չգտված, բանահյուսական արժեքներ:

Անշուշտ պատմական միջավայրից կտրված բանաստեղծությունը, որը առավելապես հարուստ է անանուններ, գծվար է մեկեարանելի և վերջունելի, սակայն այս պարագայում կարևոր չէ, թե մեկ հայտնի Հովհաննեսներից ո՞րն է իրոք այս «փոքր ողբերգություն»<sup>311</sup> հեղինակը: Մեկ հասարակրում է միայն գրական փաստը՝ Հերոսի Հոգեբանացման տարբերի երևան գալը, սիրելիի կերպարի երկրորդ պլան մղվելը (որը, չենք կասկածում ժողովրդական սիրային երգերում ժողուց առկա է եղել): Այն ցույց է առնում, որ երկու գրականությունների քնարերգություն մեղմումն սկզբից՝ իդեալականացման՝ ռեալիզմին խորթ այդ մեթոդի հետ զուգընթաց, զարգանում է մարդկային Հոգեմկրանի կարագրությունը, երևա է, հանախ նատուրալիզմի և ցավային-սրգանական զգացումների շրջանակում:

Բնութագրելով Հովհաննեսի վերահիշյալ առաջ՝ Վ. Բրյուսովը գրում է. «Իսկական զգացմունքների այսպիսի երևի չկան ոչ Պետրարկայի ստեղծներում, որը սպրի է մի գար առաջ, ոչ էլ Թանսարի սիրային երգերում, որը գրել է համարեն մի գար հետո: Բանաստեղծը գտել է սիրո այնպիսի խոստովանություններ, որոնք մեկ շիտիկ հասկանալի գարման այն բանից հետո, երբ իրենց Հայտնություններն արեցին Ալֆրեդը զը Մյունսեն, Հայնեն, Բոզլերը...»<sup>312</sup>:

Մենք մտադիր չենք նվազեցնել Հովհաննեսի բանաստեղծությունն արժեքը, ոչ էլ զրկել նրան վերագրվող պատմական առաջնությունից, պարզապես ուզում ենք հիշատակել արևելյան աշխարհի այլ տարածաշրջանում ստեղծագործող պարսիկ հեղի-

311 Ջոն Գարսունտերի արևմտագրությունը է՝ արված Ռուդարի քահանայապետից մեկ կապուցուրումը:

312 Познания Армении с древнейших времен до наших дней со вступительным очерком и приложениями В. Брюсова, М., 1918., стр. 54.

նակներին, Հայ և պարսկ ժողովրդի պատկերավոր մտածողության, գեղագրական ըմբռնումների և չափանիշների ընդհանրությունը ընդգծելու համար:

*Օնսորի.*

Գիշերները, նրբ հիշում եմ մեր միացման պահը,

Մինչև լույս հազար տեսակ ողբում եմ,

Սարսափում եմ (այն մտքից), որ գիշերը մաճս իմն յիմանի,

Որ կրկին հանդիպմամբ խանդավառեմ հոգիս<sup>313</sup>:

*Այս բանաստեղծությունները կառուցված են կյանք-մահ Հայտնի Հակաթևեղների Հիման վրա, համապատասխան զբամասիկ լրացումների ուղեկցությամբ (ազր, արյունահեղություն, այրում ևն): Ուշադրով է սիրուհու կեցության բացակայությամբ երա՛հարավորությունների ցուցադրումը՝ կառուցված արամազրությունների Հակադրության վրա: Հերոսը տառապում է, իսկ սիրո սրյակուր՝ զգարանում:*

*Հովհաննես.*

Պարծար զարիւնքս վաթեցիր Ի տուզնիդ զըրիր հինայ:

*Թաւրթ Զագանի.*

Երևի նրա համար այդ կուռքը իմ արյունը

Թափեց, որ (դրանով) ներկի իր շիկակարմիր ձիւն<sup>314</sup>:

*Այսպիսով, պարզ է դառնում, որ սիրային քնարերգությունը այնուամենայնիվ զարգացել է երկու ուղղությամբ՝ գեկորատիվ-նկարագրական և հոգեբանական:*

*Վ. Ժուկովսկին իր աշխատությունը սկսում է Հեռեկայ խոսքերով. «...Պարսկաստանում գրականության վրա իշխում էր քաղաքականությունը»<sup>315</sup>: Այս, և այդ քաղաքականություն իշխա-*

313 Պարսկական գրականության մեջ սիրային քնարերգության զարգացման արագից շարժմին, որին պատկանում է Օնսորին, նույնպես հասնույ չէ հոգեբանացման նրանցը:

314 Մ. Ռ. Օ. Օսմանով, *Тол. мотев. стана*, стр. 47.

315 В. А. Жиркович, *Али Араалдан» Ծառեր*, СՊԵ, 1983, стр. IX.

նությունը առավել զորեղացած Մաճմուշ Ղազնավյանի տիրապետութեան սրտք, երբ նա արքունիքում ստեղծեց արհեստավարժ բանաստեղծների ինստիտուտ, «բանաստեղծների արքայի» (մաշեք ալ շարս) գլխավորութեամբ: Ի դեմս արքունական պոետների, այդ «քիբրա ու հումիկ» թյուրքը Հեռաստեղծներն զնաՀասեց իր քաղաքականութեան՝ ավարտու արշավանքների քարոզիչներին և Հասագովներին, որոնք Հերոսացնում և սրբացնում էին երակերպարք: Փաստն այն է, որ սաղանդավոր բանաստեղծների մի «Հզոր խմբակ» այսօր մեզ է թողել զիգաններ, որոնց մաս 50 տակուր ներքոյներ են՝ շատերը Հենց երան նմիրված: «Բանաստեղծների արքան» փաստորեն սրինակահացված գրաքննիչ էր: Այդ է պատճառը, որ Ռուզաբիի պոեզիան Ղազնավյան շրջանի արքունական արվեստի Համեմատութեամբ անկաշկանդ ու պարզ է: Այնուհանդերձ, «...տեղնախանդավա և սաճմուկնուցիչ ներքոյների Հեռ մեկանդ, մենք տեսնում ենք այնպիսիները, որտեղ խկապեռ զգում ենք մարդկային սիրտը՝ ցափոց և անբացող»<sup>16</sup>: Մակայն զա մամանակավոր երեւոյթ էր: 12-րդ դարից սկսած պարսից պոեզիան ազատագրվում է այդ ենշումից և զարգանում այլ՝ բնականոն հուևով:

Հայոց պոեզիան, որ մինչև 13-րդ դարը գտնվում էր Հոգևոր ինստիտուտի վերահսկողութեան տակ, նաևապարհ է Հարթում դեպի մոլորդրական զանգվածները: Հասկապեռ այդ շրջանում Հայ գրականութեանը չէր կարող անհազորդ մեայ սեփական մոլորդրական ստեղծագործութեանը, ինչպես նաև՝ Հարեան մոլորդրների մշակույթին:

## ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆ, Թ՛Ե ՆՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

*Դա իր խոսքն է՝ գիտակցարար գերահանգեղամարման  
ստացի խոսքով, և ստորը՝ խորաթափանց  
գերապրման՝ որպես սեփական:*

Լ. Մ. Քասուկից

Գործից գրականության աշխարհին ոգին, անշուշտ, իր ազ-  
դեցությունը պետք է ունենար Հարևան ժողովրդի վրա և խմբա-  
ներ աշխարհում ժամանակակից գրականության հրահրումները: Այն հանդիսն էր  
էր խաղում տարածաշրջանում, այդ է պատևարը, որ Հարևան  
Վրաստանը հույնպես գերմ չէր մնում այդ ազդեցությունից: Եթե  
կողայոս Մառը այդ կապակցությամբ նկատում է, թե մեկուկուս  
Ըր որք, որոնք ի զույգ առաջին Հանգուրժող էին քրիստոնյաների  
Հանգեկ, երբ կապը թուլացավ պարսիկների Հեա, ապա Վրաստա-  
նը շտից և ոչ մի աշխարհին գրող<sup>317</sup>: 13-15 դդ. տարածաշրջա-  
նում սոցիալ-պատմական փոփոխություններին, ժողովրդական  
շարժումներին, կրոնամիտքիական փառաբարների փոխներթա-  
փանցման, ժողովուրդների անմիջական շփումներին, Հայոց մեջ  
Հոգևորականության ազդեցության թուլացման Հեա մեկուկուս  
պոեզիայում մեղադրվում է աշխարհին սկզբը, որը բազմազան  
գրականություն էր Հանգեկ գալիս: Անթարսոյց է գտնում մեր  
սաղափայտների՝ Կոստանգին Երզնկացու, Լովհաննես Թիկուրա-  
ցու, Գրիգորի Ազնաւարցու և այլոց Ժամանակակից պարսից  
պոեզիայի նմուշներին: Գրիգորի Ազնաւարցու ժամանակակից  
մեջ պահպանված սաղափայտ ցույց են տալիս, որ ես հանաչի է ի-  
րականական պոեզիան, Հասկապետ՝ սրախարհում կոչվող բանա-  
ստեղծությունների մեջ, որոնք գրվում էին ընդմիջվող պարսիկ-  
րեն, թյուրքերեն, արաբերեն լեզուներով: Դա այնքան տարած-

317 Հմմտ. Մ. Մառ, *Восточные и развитие древнегрузинской светской поэзии*,  
Тбили, 1912, 232.



Ված երևույթ էր, որ պոետիկայի տեսութայան մեջ անվանում ունեթ՝ մտյաժա, և դիժաններուժ Հասուեչ տեղ էր գրադեցնուժ<sup>118</sup>:

Աղթամարցու պոետիկայուժ անեհալա է պարտեց պոեզիայի Հեա ընդհանրության մի քանի մե, որտեցից մեկը բախալուսն և, գրական կեդժանեմե քասուուժը, որը մեկը նկատել ենք դեսես կուսանեցին և ՀոժՀանեսես ևրգեկացիների մու: Դա պարսկական զաղալի պարտադիր կանոններից մեկն էր, ուշագրաժ մի երևույթ, որը վերջնականապես կայացաժ 13-րդ դդ. և բանասանեժան «ես»-ի Հաստատման և անհատականության գրանորման նշանակներից մեկը զարժաժ: Հայ տաղերգության մեջ մեկը արգեն ժանոթ ենք ալը երևույթին, որը ակրտստիքոս է կոչժուժ: Դրա տարբերակները՝ ժայրակապը, գլխակապը, Հայոց մեջ արտահալուուժ են մեր տառերի նկատմաժր ունեցած պաշտամունքը, որը տարբեր գեղարժեստական երանգաժորուժ է ստանուժ: Գրիգորիս Աղթամարցու որոշ տաղերուժ կամ տաղերի առաջին տառերոժ, կամ էլ վերջին տանը Հիշատակժուժ է Գրիգորիս անունը.

Մորից սպասատրե և աշակերտի՝

Գրիգորիս, մականունս է Աղթամարցի<sup>119</sup>.

Հայանի «Այրեն միեչև Քեն» բանասանեժանը<sup>120</sup> մեղ Հիշեցնուժ է Մանուչեհրիի բեյթը՝

Աղթամարցի.

Այրեն միեչև ի Քեն քենե զանգատիմ ես

Քաներս ես յու՝մ ասեմ կրք դու լըտող շես<sup>121</sup>:

Մանուչեհրի.

Քյուրքական լաղոժ դու լաժ ես նրզում,

Իժե Քամար քյուրքական և տղուզական երգեր կրգիթ.

118 Տե՛ս Քոլլեքս-է Սասնի, Քեժուան:

119 Գրիգորիս Աղթամարցի, Տաղեր, էջ 127:

120 Ե, Ակերկանի կարծեքոժ այն ուղերթ է իր վաղապանից:

121 Գրիգորիս Աղթամարցի, Տաղեր, էջ 160:

ԱՄՆԸ լեզվով դու կարող ես երգել.

Գու իճճ համար Ա-Գ ու Հ-Գ ես (ամեն իճճի)<sup>322</sup>:

Գրիգորիսի պոեզիայում անբնիկական վարպետությունը ցուցադրելու երևույթը ակնհայտ է: Տպգրից մեկը իր քառյակների առաջին տառերով կրկնում է հայոց այբուբենը<sup>323</sup>: Այդ ամենով Ազթամարցին ընդհանրություններ ունի պարսիկ բանաստեղծների հետ, որոնք «պատասխան» անվան տակ նոր պատկերի և քարզ հանդի սրտումներում համարի զուհում էին բանաստեղծություն հրաքը: 12-րդ դարի արքունական բանաստեղծ Ամազը այնպիսի կատարելության էր հասցրել պատկերի քարզությունն ու ժայնաներզայնակության անբնիկան, որ նրա բանաստեղծությունը սրգես նմուշ մտել է Ռաշիդ-ազ-Դին Վաթվաթի պետերկայի արակառա<sup>324</sup>:

Այս սրինակները, բացի մեզ հետաքրքրող բանաստեղծական մեկնություններից ընդհանրություններից, ցույց են տալիս նաև, որ թյուրքերեն երգերը 12-րդ դդ. պարսիկ ժողովրդի մեջ արդեն գործածական են եղել, տարածված, որ այդ լեզուները տարածաշրջանում մասշեղի են եղել և ընդունված: Մի հանդամանք, որ մենք ավելի ուշ՝ 14-15-րդ դդ., տեսնում ենք հայոց Հայրենների քառապաշարում, որից և սնվում էին մեր տաղերգուները: «...երբ փեսային կոզմի խնամի կանայք այջկան կոզմը կերթան, մեսայ թմրուկով տանկերեն չորս, հինգ հարեն (երգ) կերգեն, յետայ կսկսին գոգաստանական երգերը, որ տոբարար տանկերեն են և որոնց չեք կրսեն»<sup>325</sup>: «Մեր աշուղները, որ... շատ ավելի

322 Արարական այբուբենի տասնյակներ ցույց տվող տառերը են: (Տե՛ս Մանուշեհրի, Գիվան, էջ 138):

323 Գրիգորիս Այթամարցի, Տաղեր, էջ 188:

324 Անտոյ Ռոյաբադի:

Եղև մրչունը ինուել իմանար, և մազը հոգի ունենար.

Անու ես այդ մրչունն եմ, որ խոսել գիտե, և մազը, որ հոգի ունի:

Բնագրում ակնհայտ է մ գ և տառերի մաշմանվազը, ազյար մորի տխան գուշառ, վը գրար մորի ուսվան դարադ, ման ան մուրի տխանցորամ, վը ան մուշամ, քն բան դարադ (տե՛ս Բազու-ազ Բու Բառառ, Հադ, սր. 132):

325 Յ. Մանիկյան, Հեթոթունը Անեզա, Քր-Ֆիլոս, 1985, էջ 414:

պարսկերեն ու թըրքերեն լեզվով կըքերթեյին... պետք մը կըզգային սակայն իրենց մայրենի լեզվով արտահայտելու իրենց հոգու մեծ հուզումները<sup>326</sup>: Հենց այդտեղից էլ նրանք մուսք էին գործում գրականություն և սինթեզվելով պաշտոնական պոեզիայի ավանդույթների հետ՝ գրականություն մեջ մեափարում էին նոր տրակ: Այստեղից էլ սերում են Ազթամարցու և մյուսների «խայտարեկան» բանաստեղծությունները՝ գրված պարսկերեն, հայերեն և թյուրքերեն լեզուներով<sup>327</sup>:

Պարսիկ բանասեր Զիաուգ-Պին Աաշագին այդ պատմական ժամանակաշրջանը որակում է որպես Անգրկոճկատի քրիստոնյաների ու մահմեդականների մուսք կապերի շրջան: Այդ առիթով որինակ ենք բերում Խազանի բանաստեղծությունները.

Խազանի.

Երբ ևս ճառնում եմ Հայաստան,

Հայաստանի ծոզովորդն ինձ զինով է դիմավորում<sup>328</sup>:

Մեզ Հայանի է Խազանի այդ սգով գրված մեկ այլ բանաստեղծություն, որը հաստատում է այդ շրջանում հասկապետ՝ արևելյան ծոզովորդների փոխադարձ բարեկամությունը.

Արխազիայում (միշտ) բաց է դուրս

Եվ Ռոտոմնների մտտ՝ օրեանը՝ պատրաստ...<sup>329</sup>

Ինչպես տեսնում ենք, Հեռագրապոետները չեն շրջանցում ազգացությունների խեղդիչը: «Կարելի է հաստատել, թե պարսկերեն տաղերը, գորտեր կը գանենք Ազթամարցու տաղերուն մեջ, փոխառություն և ըլլան պարսիկ բանաստեղծություններ, բայց կրեանք ըսել, թե անենք յորինուած են նմանութեամբ պարսիկ

326 Կ. Կոստանյանց, Գրիգորիս Ազթամարցի և իր տաղերը, ՔԻՖՅԿԱ, 1998:

327 Գրիգորիս Ազթամարցու տաղերի պարսկերեն հատվածներն է Գլխոված Բ. Չուգասզյանի «Հայ-իրանական գրական առնչությունները» հետազոտության 4-րդ գլխից, Սրևան, 1963:

328 Խազանի, Կիվան, էջ 881.

329 Կույմ տեղում, էջ 25:

տազերու, ուստի ենթակա պարսից ազդեցութեան<sup>330</sup>։

Հարկ է կրկին գերազանց Երզնկացու և Աղթամարցու պոեզիային և նշանել, թե ի՞նչ է ներառում ազդեցութուն հասկացութունը, և արդյո՞ք պարսկարանութունների բոլոր տեսակները ազդեցութուն պետք է համարել, թե՞ մեզ հետաքրքրող երևույթի համար առաջին համապատասխան որակում կա։

Կուսանդին Երզնկացին մի ուշադրաժ վկայություն է թողել, թե ինչու է ինքը բանաստեղծություն գրել «Շահամայի մայնոֆ»։ Այս մին...ել կայր ու Շահամայ ասէր մայնոֆ, ես եզրայրք խնդրեցին թէ ի Շահամայի մայն մեզ ստանաւոր ստայ, ես շինեցի գրանքս գայս, ի Շահամայի մայն կարգացէք<sup>331</sup>։

Դա նշանակում է՝ գրել Հայերեն բանաստեղծություններ, կարգալ պարսից մեոֆ, Հարմարեցնել Հայոց բանաստեղծությունը Շահամայի չափին։ Աղթամարցու պոեզիայում «խայտարգեա» տազերի երևույթը մենք անվանում ենք դիտափոխյալ նմանակում, սնապատեննում, որտեղ եույնիսկ Հանք չի գործադրվում թաքցնել նպատակը։

Երբ Պարարքայի բանաստեղծություններից մեկում Հայտնարերում են Վերգիլիոսի մի տողը, ես գարմանում է և արզարանում ասելով, թե թող ների իրեն Վերգիլիոսը, քանի որ ինքն էլ ժամանակին սգափել է Հսկերոսից և Լուկրեցիոսից<sup>332</sup>։ Վերջինս չգիտակցված «ընդորինակութուն» է, մեծագույն փարպետի ազդեցություն, իսկ մենք քննում ենք ազդեցության այն մեք, որը նմանակում անունն է կրում և կատարվում է դիտափոխյալ, անսրոյ, գուցե իր մեջ երբեմն կրում է «պարպիայի» երանգ։

Նմանակության և սնապատեննման երևույթը հատուկ է բոլոր ժամանակների և բոլոր գրականությունների։ Միջնադար-

330 Գրիգորիս Ա, Կարողիլոս Աղթամարցի, կեսնցն ու քերտամենքը, գրեց Ն. ԱկրՇեան, Վիեննա, 1958, էջ 6894։

331 Կուսուանդին Երզնկացի, Տաշեք, էջ 209։

332 Հմմտ. А. Ватсон, Итальянское возрождение в гонимых индивидуальности, М., 1989, стр. 32-40.

յան արվեստագետները Հանախ նմանակում էին ունեակ արվեստին, Հեռուորդները նմանակում էին իրենց Հայանի նախորդներին: Հայ գրականության մեջ այդ երևույթը հուշանշան ստրամբան է ընդունված էր: Հայանի է, որ նախկինում Հաջորդները մզակ են նմանվել նրան, «...Հեռուի Հանախից բանաստեղծի որևէ սկզբունքներ»<sup>333</sup>: նմանակության միջնադարյան պատկերացումները և ըմբռնումներն այնքան տեղի ունեցան որ տեսնվածն էին, որ սրբապատկերից պոետիկայի մասին Հայանի իշխմանց Գ. Զան Գրյունեբաումը որոշումներն նկատում է: «Վարելի է կարծել, որ բոլորը պատկերում էին իրար, և որ գրականությունը մեծապես պատկերվում էր և հուշանշան էլ մեծապես ներգրում»<sup>334</sup>:

Գարսի պոետիկայում նմանակության երևույթը զբղած էր պոեզիայի մեկնարանության Հենց Հիմքում, այնպես ինչպես «Հասկանալ նկատի Արուզի Սամարգանդի» պոետիկայի գրական այն խոսքերը, թե բանաստեղծական արվեստում ոչ մեկը չէր Հասնի կատարելության, մինչև անգիր չիմանար 20.000 տոց իր նախորդների և 10.000 իր ժամանակակիցների բանաստեղծությունների»<sup>335</sup>:

Նմանակությունը կատարվում էր ի չորս աստիճան: Այդ են ջուրյ տալիս Համաշխարհային գրականության գանձարանը մասն բազմաթիվ նմանակություններ՝ Գյոթե-Հաբից, Գույկին-Ղարան են:

Գարսի պոետիկայում նմանակության երևույթը այնպես էր սրինականացված, որ գրա տարրեր տեսանքների Համար պոետիկայում գոյություն ունեին Հասուկ տերմիններ, իսկ վերջիններին տարրերակման և իրարից պոետիկա թույլտարիի սահմանները

333 Յե'ս Ա. Գ. Մարտյան, Միջնադարյան հայկական պոեզի (ԺԱ-ԺԶ դարեր), Երևան, 1985, էջ 31, տե'ս նաև Վ. Արուշտիան, Գրիգոր Նարեկացու լիցում և ոմբ, էջ 22:

334 Հիմք, Դ. Զ. Փոն Գրունեբաւմ, Օտանայի պոեզի, Եր. 128:

335 Նալան Արսու, Շրվ. աշխ., էջ 58:

Ճասնագետների հատուկ քննության նյութն էին գտնում: Դրանցից են՝ Բաղդիթը, Տաղիթեն, ջավարը, Բազմինը ևն, Հասկացույցուհիներ, որոնց սահմանազատման եզրերը առավելան են և աննշան տարրերույթուհիներով նույն երևույթն են արտացոլում: Օրինակ՝ պատասխանը (Չավար) լայն ընդգրկում ուներ՝ սկսած պատկերի կրկնությունից, վերջացրած բանաստեղծական շարքով կամ Հանգով: Այն առավելապես տարածված էր մրցույթների մամանակ և Հանտի էքսպրոմտի բնույթ էր ստանում:

Նմանակությունը տարրեր ֆունկցիաներ էր իրականացնում: Նրան այն պատասխան էր ինչ-որ մեկի Հանգի կամ շափի կատարելությունը և վարպետությունը, ապա նմանությունն այնքան ընդգծված էր լինում, որ Հարկ չէր լինում փնտրել բնորոշակը: Վերջինիս յուրահասակությունից՝ սնից, Հանգից, շափից, մոտիվից, Հասկացվում էր, թե ում է ուղղված «պատասխանը»: Նրան Հանձն առած մոտիվին կամ պատկերին (մասնի) չէին կարողանում առավել փայլուն և անսպասելի լուծում տալ, կարող էին «պատկերի գոգ» անվանվել<sup>336</sup>: Նմանակության մեկ այլ մեք «Բազմինն» է, որի մասին պոետիկայի Հայտնի տեսարան Ալ-Ռազույանին գրում է. «Բազմինը» այն է, երբ բանաստեղծը մեկ ուրիշի բնյթը տեղադրում է իր բանաստեղծության մեջ, որը կատարվում է Հարգանքից և ոչ թե գողանալու ցանկությունից...»<sup>337</sup>:

Այստեղ կարևորը այն էր, որ մեջբերված բնյթը կապակցվի սեփականի Հետ և եսխորդ Հեղինակի գաղափար-պատկերը ներկայանա նոր որակով: Նրբ մեջբերումը ճկուն և նրբաճաշակ լուծում էր ստանում, պոետիկայում այն կոչվում էր «Հրաշալի ներմուծում» (Հոսն-է Բալի): Այսպիսով բանաստեղծությունները Հանգին էին գալիս նոր, տվյալ բանաստեղծին յուրահասակ

336 ՏՆՆ՝ А. А. Стариков, К вопросу о традиции эпической "Похериди" в литературной восточного средневековья в сб.: Взаимосвязки литературы Востока и Запада, М., 1961, стр. 60.

337 ՏՆՆ՝ Рахим Мусулманжолов, Асрори султан, Душанбе, 1980, с. 7.

գծերով: Դա կրկնութունն շէր Համարվում, արտագրություն՝  
 եռյակն, այլ գտնուած էր այն, որը ստեղծվում էր ամանակա-  
 նի, արգեն ծանոթի և եօրի Հանդիպումից: Եմանակվում էր ոչ  
 միայն Հանգը, պատկերը, բայց, թեման, այլ նաև ժանրը: Եկա-  
 միի «Եմանակ» (Հնգամտայան) իր ետեից բերեց եմանակումները  
 մի հզոր Հոսանք ոչ թեմանակի գրականութուններում Զամի,  
 Ամիր խորով Դեհի, Ալիշեր Նափոյի, Լամիի եւ:<sup>337</sup>

Գրիգորիս Ազթամարցու Հայտնի «Բայտարգեա» տալերը  
 եօր երևույթ էին Հայ գրականութուն մեջ, որը մեք գիտակցված  
 եմանակութուն ենք Համարում և ոչ թե ազգեցութուն: Դա  
 Հարգանքի տուրք էր պարսից գասական պոեզիային և ջույճ՝ սե-  
 փական վարդանութուն և գիտելիքների: Եմանակութունը եմա-  
 նակողը ընդգծում էր եմանակվող էյուրթի արմեքը, որտեղ եմա-  
 նակութուն էյուրթ գտնուած էր «փորձաքար» իր կարողութուն-  
 ներն ու ազանգը ջույցարերելու:

*Ազթամարցի.*

Իմ շուրան ծաղիկ, կարմիր վարդըն դու,  
 Զորս դէր սմառի, թէ մարամ թէ թու (Իճն"ւ ուշացար,  
 ես ճիվանդ եմ առանց քեզ)...

*Կամ՝*

Պղտանամ թազվեմ քիուշամ խրդայ (մեղեսիկ<sup>339</sup>  
 կվերցնեմ, ջուրմ կհագնեմ)...

*Կամ՝*

Տուշմանի թուրայ շավաղ ճիկարիուն  
 (Թշնամուդ սիրտը թուլ արունք)...

*Կամ՝*

Պուրթիմ խիրաթմանդ քարդի դիւանայ  
 (խելամիտ էիք, դարմիրի խելագար)<sup>340</sup>

338 ՅՆՎ A. A. Շարոտ, ԳԶՎ, աշխ., էջ 60:

339 Թազերեք մամնդականք պարտաղիտ ասթիլուան է:

Այս պարսկերեն ձևերը Հեանդակներին գծագրում են մեզ ծանոթ յԱՇԽ մոզելը՝ իր տվանդական ասորիբուսներով, մեռնում էմ, Հիվանդ էմ, կրոնափոխ, դավանափոխ կլինեմ, զու գնչեցիկ ես, արյուն ես Հեզում, խեյագարություն բերում են: Սաադիի «խայտարգես» բանաստեղծությունները, ընդմիջվող արարերին և պարսկերեն բեյթերով, նույն մոզելն ունեն:

Մինչև որս ստուգապես հայտնի չէ, թե Ազիթամարցին ու՞մ է նմանակում, ու՞մ պատկերներն է կրկնում կամ մեջ բերում: Կարծում ենք, որ նրա ջանքերն ուղղված են սիրային թեմայի նմանակմանը, ներսահաշակ ոճին: Այդ են հաստատում խայտարգես տաղերի հայերեն հատվածներում համեմատությունների խտացումները, որոնք սրպես բանաստեղծական արտահայտչամիջոց ծանոթ էին մեզ Նարեկացուց, Ենորհայուց: Արեգակ, Լուսին, Արուսյակ, առափոռ, շուշան, ծագիկ, վարդ, կանթեզ, եռհար են, որոնք պարսկերեն գուգահեռների Հես միասին՝ շամ-արև, եռհար-լալ, Արուսյակ-Ջուհայ են, զեկորատիվ սիրային քնարերգություն մի նոր տարատեսակ են ստեղծում: Այստեղ չենք կարող շեխտասակեղ ն. Մատի ույն գիտարկումը, թե Ազիթամարցին պենագարզվում է իր լեզվական գիտելիքներով երեք լեզվով<sup>341</sup>:

Այդ երևույթը միայն մեր գրականության մեծաշնորհը չէր: Հայտնի է, որ վրաց արքունիքում կազմակերպված խեղույթներին մասնակցում էին տարբեր ազգերի և զավանսերների պաշտական բանաստեղծներ, որոնք տիրապետում էին արևելյան ույլ լեզուների: Խաղանրից մեզ հասած մի քառյակը, որտեղ պարսկերենը ընդմիջվում է վրացերենով<sup>342</sup>, կամ Սուլթանիի բանաստեղծությունը՝ ընդմիջվող թյուրքերեն արտահայտություններով, գրա փայլուն ապացույցն են:

340 Գրիգորիս Ազիթամարցի, Տաղեր, օրհանգձերը ընդամ են «Դու ես արեգակ, լուսից ի լրվան» սկզբնաստեղծ տաղեր, էջ 199-205 (ստեղծացի քաղվածություն):

341 Մ. Մար, На лютней повзани в Азмишко, с. 31.

342 Այդ մասից տե՛ս Կ. Մ. Շաբան, Из грузино-иранских сказов, в сб. Руставели, Тбилиси, 1938, с. 23.



*Սուգանի.*

Ո՛վ լուսնադեմ թրքունի, ի՞նչ կլինեն, որ գայիր գեշերը  
իմ իրենից և ասնիր -Ղոնաղ քերաք-

Վարդերես թրքունի, թեպետ ես թյուրք չեմ,  
(Սակայն) գիտեմ, որ թյուրքերեն ծաղիկը՝ չեչաք է  
(կոչվում)<sup>343</sup>:

*Եմանակությունները կատարվում էին տարբեր մակարագաներով: Գրիգորիս Ազթամարցու պոեզիային Հասկանչական եկեղեցական և պատկերամատածողական սնուպատենեումը: Այս ամենով Հանգերս Ազթամարցին Հարազատ է իր գազափարախտությանը, իր Հավատին, իր էթնոմշակութային ավանգույթներին:*

Վանառական մի հայ և լոյժ նարտասան՝  
Մխիթար Բաղիշեցի, և աստուածաման  
Ֆրնաց նա ի սահման Ատրքապատական,  
ի Ղում և ի Յիրաղ և ի Ծոքրասան...

Ասեմ, -Գու մուսուլման լազզէ Մահմետին,  
ի քաց թող ըզՔրիստոս և զհաւատ նորին,  
թէ ոչ՝ տանջենք ըզքեզ սաստիկ ւ ահագին: -  
Ասաց...-Ես ոչ փոխեմ զլոյս ընդ իսաւսին<sup>344</sup>:

*Սա ոչ միայն ցույց է տալիս այն շարժումն ու կապը, որ կար արևելյան աշխարհի ժողովուրդների մեջ, այլ նաև քրիստոնեությունից Հազթարչավ է, որտեղ մուսուլման եւ արված Հավատը սիրուհուն ստորագանելու կազապարված, կանոնարկված մեակերպումները, որտեղ լույսը ավանդակներին քրիստոնեության խորհրդանիշ է:*

*Այսպիսով 14-16-րդ զզ. աշխարհակահացող Հայոց բանա-*

343 Դիվան-է Սուգանի Սամարղանդի, Քեհրան:

344 Գոծպոթիս Ազթամարցի, Տաղեր, էջ 121, 124:

տեղծական արգիստում մեազորում էր սիրային քնարերգու-  
թյունը, որն ուներ կազապարված և կանոնիկ մտքիմներ և թեմա-  
ներ, բառապաշար, պատկերավորութայն Համակարգ, էսթետիկա  
և հոգեբանութայն: Այն պարսից, արարական և այլ գրականու-  
թյունների Հեռ ունեցած ախարանական, ծագումնաբանական  
ընդհանրութայններով և ուղղակի փոխազդեցութայններով  
Հանգերմ, մտնում է միջնագարյան գրականութայնների Համա-  
կարգի մեջ և զարգանում նրա ընդհանուր օրենքներով, սեփա-  
կան բանաստեղծական արգիստի շարժույթի ավանդույթների Հի-  
ման վրա:

Նմանակումը այլ էթնոմշակութային Համակարգի յուրաց-  
ման մեերից է, որ բնորոշ է բազմաթիվ միջնագարյան գրակա-  
նութայնների և գրանց զարգացման և նորոգման փուլերից մեկն  
է:

Անցումը միջին Հայերենին, մերձեցումը մոզավրդական ար-  
գիստին և գրանց միջոցով պարսից պոեզիային Հասուկ մեերին,  
ոնին, բառապաշարին, մտքիմներին, գալիս են Հաստատելու այն  
թեզը, որ միջնագարյան մեր տաղերգութայնը նարեկյան շրջա-  
նից Հետո, Համաարեւելյան միջավայրում զարգացման մեծ նանա-  
պարհ է անցել և բյուրեղացել որպես տանութայնների սրբոր  
մե՛ սիներից »:

## ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅՐԵՆՆԵՐԸ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՑՄԻ ՆԵՐՔՈ

12-15 զգ. Հայոց բանաստեղծութեան մեջ մեափորձում և զարգանում է զազափարական և սնական տեսակետից միասնական փոքր ժանրային մեծ մի շերտ, որն ազանցականորեն մեկ անձի է վերադարձում և հայրենի անունն ունի: Հայրենների ստույգ պատկանելությունը ճշտված չէ մինչև սրս, սակայն, այդ ամենով հանգերմ, գրանց գոյությունը անսրոզ գրական փաստ է այն գրությունի սգաին, որ պաշտոնական գրավոր գրականության ընդհանուր հունից դուրս զարգացել է ժողովրդական բանաստեղծությունը, որում ժողովուրդի ազատ է եղել իր ընտրություն մեջ և՛ բովանդակության և՛ մեծ տեսակետից:

Այդ ժամանակաշրջանում, և՛ մահմեդական և՛ քրիստոնյա աշխարհում բուռն զարգացում էին սպրում փոքր ժանրային մեները, որանք իրենց ծաղալով, նկունությունը պատասխանում էին ժամանակի հրատապ հարցերին: Դրանք համախ հանգես էին գալիս ոչ միայն որպես ինքնուրույն մե, այլ նաև՝ շաղկապված գրույցի, պատմվածքի ընդհանուր հենքին: Ա, Մնացականյանը նշում է, որ Հայրենների մի նյուզը, որ Հայոց մեջ կաֆա է կոչվում<sup>245</sup> (այստեղ Հայանի է կաֆա-գաֆին արաբերեն՝ հանգ անվանումը, որն արդեն իսկ մտածելու տեղիք է տալիս, թե կաֆաները ամենայն հավանականությամբ մեր ժողովրդի մեջ մեծ շրջանառություն են ունեցել և այն էլ՝ ոչ մեկ լեզվով) մուսք է գործել նաև արժակ: Համանման երևույթ 13-14-րդ զգ. տեսնում ենք պարսից գրականության մեջ Ասադիի, Նախարիի և այլոց

345 ՏՆՎ «Հայրեններ», աշխատասիրությունը Ա. Ս. ՄՈւցանյանի, Երևան, 1995, էջ 12:

մտա, երբ քառյակը, քեյթը կամ բանաստեղծական քննորը (զաթե) շաղկապվում են շրջանակավոր արձակի, գրույցի կամ պատմվածքի Հենքին, լրացնում կամ Հաստատում երա գաղափարական բովանդակությունը:

Հայ քնարերգության զարգացման պատմության Համար ուրուշակի Հայանություն կլինենք, եթե 12-13 զգ. մեզ Հասան Հայրենների Հաժաստի մեռադիր ազաջույց ունենայինք: Մակայն, ցաժոք, Հայրենների ամենահին մեռադիրը գալիս է 15-16-րդ զգ. Հանգամանք, որ մեզ գրկում է ամուր կոժմաններից Հայրենների մեռադրումը տանել աժկի էա, երչտ աշխտա, ինչպես մեզ արգեն Հայանի Օմար Խայամին փերազրվող քառյակների մեռադրերը, որոնք միայն 15-րդ զարից են սկսվում: Մակայն այս պարագայում որուշակիորեն Հայանի է Խայամի անը, երա կյանքի և գործի գալաչրլանը, ինչպես եսան՝ երա փիլիսոփայական երկերի գոյությունը, որը Հնարաժարություն է տալիս, Համեմատելով քառյակների և տրակտատների գաղափարական ընդհանրությունները, ինչ-որ չափով նշանի երան փերազրվող քառյակների պատկանելությունը:

Ըստ Տեհանցի՝ Նահապետ Քուչակն է Հայոց գասական Հայրենների շարքի Հեղինակը, որն ապրել է 16-րդ զ. Հասպուրակունի Տասյ գաժաստի Խառակոնիս գյուղում և Հայանի է որպես Կաչրղ Քուչակն, Կժարպետ Քուչակն: Ինչ փերարներում է Քուչակ գրական անվանը, ապա ամենայն Հաժանականությամբ գա պարակներեն քուչերն է, որ նշանակում է փոքր, Հանգամանք, որ ոչինչ չի աժկայանում մեզ Հետաքրքրող Հարցերին<sup>146</sup>:

146 Ա. Չոպանյանը չի ընդունում Թ. Արեղյանի սույն բացատրությունը. «Քիչակը այլ ժիժակելի և անգարմար կը գտնեն, որովհետև աշուղները սկսում շնորհալի, պատկերատր քառեր կընտրեն իրեն իրենց մանկանուն եւ ոչ թէ քնահալի ևսանկատարիսն մը ճատեանշող քառ մը»: Ա. Չոպանյանը այն կասկած է կան պակասություն մը ճատեանշող քառ մը»: Ա. Չոպանյանը 1940, էջ 93: Ինչքան արքայատունն՝ «Հայրեններու քառաստանը», Փարիզ, 1940, էջ 93: Ինչքան արքայատունը անհիմն ենք համարում: Քուչնք մրան կարող էր անվանել ժողովորդը:

Այսօր Հայրենիների Համահավաք տեքստի<sup>347</sup> Հետ տոաշին ծանոթութունն իսկ ցույց է տալիս գրանց բազմաբովանդակութունը և լեզվաոճական որոշ տարաշերտությունը: Դրանց տարբեր շարքերը արտացոլում են տարբեր սոցիալական ոլորտների քաղաքային արհեստավոր խավերի Հետաքրքրություն և տերմինարանություն, կենցաղային երևույթներ, գարգացող քաղաքներին պայմաններում Հողից կարվող գյուղացու կենսական որոնումներ, երբմն գյուղական կյանքի Հավերժություն, պանդխտություն մոտիվներ, խրատական-իմացարանական, ուսուցողական մաքր և Հայրենի Համար ամենաբնորոշ՝ սիրային քնարերգություն, որի եմուշները մենք ցանկանում ենք զարմնել մեր քննություն նյութը:

Ար կողմից սոցիալ-պատմական որոշակի ժամանակաշրջանի արտացոլումը, մյուս կողմից պաշտոնական-էլիտար բանաստեղծության պոետիկայի Հետ Հայրենիների ընդհանրությունները, որոնց որոշ բյուրեղացած մենք մտել են գասական տաղասացների պոետիկա, ուսումնասիրված և Հաստատված ժողովրդական Ակնա երգերի Հետ երանց եմանությունը<sup>348</sup> մեզ առիթ է տալիս ենթադրելու, որ գրանք մեկ անևի կողմից չէին կարող Հորինված լինել, առավել ևս, չէին կարող 16-րդ դարում արագորեն մեափոխվել և բյուրեղանալ: Դեռևս 10-րդ դարից սկսած՝ Հայ մասկնագրության էջերում իրեն զգացնել է տալիս բանաստեղծության մեկ տեսակ, որը գեալով գասնում է ուշագրության առարկա և բնգունում զարգացման մեծ ծափալ: Այն սկզբում Հասուկ տեսուփ

347 Տե՛ս «Հայրենիներ», Եջ, աղթ. 1:

348 Ակնալ և Վանալ ժողովրդական երգերի Ճմաճութանաճ, ըստ անգամ գեթե բառացի լիճելու պատճառը Մուշակի երգերի մետ պետք է մեկ զարթ տալ լիճելու, իսկ այլ պատճառը այն է, որ ակնեցիք նույն Վանալ ժողովրդից լիճելով, իրենց զալքի ժամանակ մալր-ժալրենցիք տալել են և իրենց ժողովրդական երգերը և առանձին կերպով զարգացելով, հասցրել մինև մեք սերը, հարկավ փոփոխվով, ըստ և միտ շարանը Եղեք պանելով՝ Օտե՛ս Մոլմանճև Քաղչուտանաճ, Մուշակ Նամակալի երգերը, Քիճիթա, 1903, էջ 33, հծծա, Գա՛ն Աթո երգի Նամակալտ Մուշակի երգերը, Օշակեց Գեորգ Ասատուր, Քիճիթա, 1905):

շի կոչում, իսկ Հետազոտում Հայտնի է գտնվում որպես «Հայրեն» կամ «Հայրեն»<sup>349</sup>:

Հայրենը պարսից բառակիր նման բանահյուսական ծագում ունի, և քանի որ արևելյան միջագայրում, ինչպես ենթադրվում է, այն նաև երգիչի է տարբեր շեղունքով, ապա Հետազոտողները Համերաշխ են այն խեղրում, որ նրա անվանումը մեափորձի է Հենց Հայրեն ասվելու կապակցությամբ<sup>350</sup>:

Ի դեպ, Մ. Արեղյանի այս տեսության Հետ Համամայն չէ Ա. Չոպանյանը, որը Հայրենի ծագումնաբանությունը կապում է Հայր արմատի Հետ. «Այսպես, ուրեմն, մեր Համոզմունքով, Հայրեն կամ ուելի նրա՝ Հայրենի Հասկացությունը ծագել է Հայր արմատից և իմաստաւարել Հայրենի (Հայրական) գազափարը»<sup>351</sup>:

Եթե եկատի ունենանք, որ Հայրենները պահպանվել են Հովհաննես Երզնկացուց, Յրիկից, Խաչատուր Կեղանցուց մեզ Հասած գրական ժառանգության մեջ, որոնք Ա. Մոսպականյանը «անհատական» Հայրենների խմբին է գտնում, ապա պարզ կդառնա, որ Հետազոտում Քուչակին վերագրվող Հայրենների Հետ մեկտեղ գրանք ընթացք արատցում են ոչ միայն սոցիալ-դատմական տարբեր ժամանակահատվածներ, այլ նաև՝ Հեղինակային սոցիալական բազմախոսով կազմ, որով Հայրենը գտնվում

349 Հմմտ. «Հայրեններ», էջ 8:

350 Մ. Արեղյան, Հայոց ԲԻԳ գրականության պատմություն, գիրք երկրորդ, 11-19 դ. 30-ական թթ., Սոնա, 1946, էջ 418:

Մասնով հետաքրքիր է նշել, որ հայոց միջնադարյան երգարվեստում Օսյան անվան է մի շեղում, որը վերագրվում է ասոցիացիայի հետևյալների: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դրանք մոլորության բնույթ ունեն «Քախանցելով կենցաղ և լայն մոլորության գամվածների շնորհով» հղվելով, դրանք հաստատվել են որպես բանավոր անկախորդության արդյունք: Դրանց մոլորության բնույթի անպարզության մեկ բազմաթիվ տարբերակների գոյությունը է (Հմմտ. A. A. Арутюнян, Армянское народное песенное творчество (Асторосферат անգլ. լեզվով), Երևան, 1969, էջ 7:

351 Ա. Չոպանյան, Նամակներ Փոշակի դիմանք, Փարիզ, 1902, էջ 35: Ինչ վերաբերում է հայրեն անվանը, ապա այն բազմաթիվ է իբրև «սուցն սուց երգիչ, բեթեր, բայրի անգ, միայն ասոցիացիայի դիմով, ուսանողով» (տես՝ Ա. Չոպանյան, «Հայրեններ» ընդհանուր)։

էր ամենազեմօհրատական ժանրային ձևը:

Ինչ գերաբերում է դարսից քառյակին, այդ երանում տեղի էր ունենում մի Հետաքրքիր երևույթ, երբ Հոնմին բանաստեղծության յուրացում էր տեսնել: Օրինակ, Օմար Խայամի տեսնել մազեիի նման իր շուրքն էր Հափարում բազմաթիվ նույնատիպ բանաստեղծություններ տարբեր Հեղինակների կողմից ստեղծված: Վերջիններին Համար կարևորություն էր ներկայացնում իր ստեղծագործության (Հաեախ Էքսպրամաթ) յուրաքանչէր գույր և շրջանառության մեջ մտնելը, որտեղ տեսնել ծառայում էր որպէս «որակի նշան»: Այսպիսով, բանաստեղծության այդ «տեսակը» զարեք շարունակ Համայնքում էր նորանոր տարբերակներով, և որքան շատ էին այդ տարբերակները, այնքան Հափաստ էին գրանց մեծ գործառութան ազդեցութիւնները: Հայրենները նույնպէս կոչեկաթով աշխատանքի արդյունք ենք Համարում, որոնց ստեղծման Համար տեսչուշա նախատիպ են Հանցիւսացի մեծ ժողովրդականություն զայնչոյ Հեղինակային, տեսչատական արժեատի գործեր, որոնք բազմաթիվ կրկնությունների և նմանակումների առիթ են ծառայել:

Ի՞՞՞՞՞՞՞նք են նշել այդ տեսչատները, և որո՞նք են այն առանձնահատկությունները, որ մեափորել են փոքր ժանրային ձևերի յուրահատուկ «տեսակը» նահագիւս Քուշակ, Օմար Խայամ, Մահաթի իանում են: Երանք ժողովրդին կյանքի տարբեր էփեհոգիբուտական ոչորաների և Հասարակական գիտակցության ձևերի Հեա կապուղ շափանիշներ և իորհրդանիշներ էին Քուշակը՝ աշխարհիկ ազատախոհության, Խայամը՝ փիլիսոփայական ազատախոհության, Մահաթի իանումը Տրուոլ զգայականության ևն: Կատեգորիաներ, որոնց նկատմամբ Հակումը, Համատարած կրտական բարոյադիտության Հեա զուգահեռ, միշտ գոյատեակ է ժողովրդի ընդերքում:

Ա. Զուգանյանը Հայրենները Համեմատում է Մասցիփ, Հափեղի, Օմար Խայամի ստեղծագործությունների Հեա, որոնց Համարում է Քազափորներին ծառայուղ, արբունական փայլով սմա

փած Հեղինակներ, այդպիսով, ընդգծելով թվարկվածների և քու-  
 շակյան բանաստեղծութունների տարբերությունը<sup>352</sup>: Սակայն  
 Ա. Չուպանյանը մասամբ է իրավացի: Նախ՝ թվարկվածներից ոչ  
 մեկն էլ պարսկական միջնադարյան պոեզիայում չի համարվում  
 և չէ արքունական: Ով թեկուզ Հպանցիկ ծանոթ է իրավամբ ար-  
 քունական արհեստավարժ բանաստեղծների արժեստին (Օսուրի,  
 Ֆառուսի, Մանուչեհրի, Անվարի, Ազրազի Մոեզզի ևն), նրանց  
 թեմաներին, սերն, մեթոդին, անմիջապես կեկատի նրանց միջև ե-  
 զած տարբերությունը: Սասգին, Հաֆեզը, Խայամը՝ որպես Հայտ-  
 նի և Հեղինակավոր այրեր, ընդունված կարգի համաձայն ընդա-  
 մենը արքունիքում մեկենասներ են ունեցել, սակայն արքունա-  
 կան ծրագրային էթիկետին չեն ենթարկվել, «գրաքննություն»  
 չեն անցել և համեմատաբար ազատ են եղել իրենց ստեղծագոր-  
 ծական ընթացքի մեջ: Ավելին, ոմանք հակամարտության մեջ են  
 եղել իշխող խավերի հետ: Հիշենք Հենց նույն Օմար Խայամին, ա-  
 բրին վերագրվող քառյակները ոչ միայն անընդունելի են եղել իս-  
 լամական գրաքննությանը, այլև փառստորեն զուրա են մղվել  
 պարսից գրականությանից, Հանրաճանաչություն ստացել և սե-  
 փական Հայրենիք վերագարձել միայն եվրոպացիների կողմից  
 «Հայտնաբերվելուց» և թարգմանվելուց հետո<sup>353</sup>: Ինչ վերաբե-  
 րում է Սասգինի արժեստին, այսպե՛ս մեծապես Հեռացած է ար-  
 քունական գրականության կազապարից, և՛ մեկ և՛ բովանդակու-  
 թյան տեսանկյունից և յուրովի սինթեզ է էլիտար ու ժողովրդա-  
 կան-քաղաքային արժեստի, որտեղ Հզղված է սամկական սկիզ-  
 բը: Բնությունը ցույց է տալիս, որ Սասգինի բանաստեղծու-  
 թյունների և մեր Հայրենիքի պոետիկան բազմաթիվ բնական-  
 րություններ ունի, ինչը կապված է տարածաշրջանային սոցիալ-  
 օգտամական փոփոխությունների՝ Համընդհանուր ժողովրդական

352 A. Tchobanian, Les Trouvées Armeniens, P. 1905, իՉուպն Գալե՝ Поэзия Армении с древнейших времен до наших дней. Редакция, вступительный очерк и примечания Валерия Брюсова, М., 1916, стр. 56:

353 The life of Edward Fitzgerald, Translator of the Rubaiat of Omar Khayyam. By Alfred McKinley Tertun, London, 1947.



չարժուձեերի, արեւելքի տարրեր ժողովրդների անմիջական  
չփուձեերի, Հայոց մեղ Հոգնորականության ազգեցության թու-  
լացման Հեռանքով ամբապնդված աշխարհիկ սոցու վերելքի,  
քաղաքների և արհեստների բուռն զարգացման, ինչպես նաև՝  
նոր մեաւորված գրական Հերոսների, աշխատանքի մարդու՝ ար-  
հեստավորի սոցիալական կարգավիճակի Հաստատման Հետ:

Փորձենք վերջ բերված գրույթը Հիմնավորել փաստական  
եյութի վերլուծությամբ, տարրեր ժանրերում արտահայտված  
Սաադի բանաստեղծության և Հովհաննես Երզնկացու Հայրենի  
ընդհանրությունը նշող մի թեմայի քննությամբ:

ՄԷկ մարդ մի ճուհար ունէր ՚ ի խելաց շահել յըկարաց,  
Միճ ինչքն ի վերսայ եկաւ, նա զընաց ճուհարն ի մեռաց,  
Քընաց նա ի վայր նստաւ, ողորմիկ ու շատ մի իլաց:  
Նորա լացն այլ ի՞նչ շահ է, երբ զընաց ճուհարն ի մեռաց<sup>354</sup>:

*Սաադիի Գոյեթմանում «Մերության և թուլության մարին»  
գլխում մի բանաստեղծություն կա:*

Լսել եմ, որ այս օրերս, մի գառամյալ ճերուցի  
Ջառամ գլխում մացրել էր, որ մի շահել կին առնի.  
Մի զնուստի սիրուն աղչիկ ուզեց Գոհար անունով  
Եվ թաքցրեց գոհարի պես մարդկանց այքից ապահով:  
Ինչպես հարկն էր լավ հարսանիք արավ ծախքով մեծամեծ,  
Բայց ճերուցին հենց նույն օրը ծախորդության հանդիպեց:  
Մերն այնուհետ գանգատվում էր ծանորենրին սրտակից,  
Թե իմ սրտով սիրած կինս կույս հեռացավ ինձանից:  
Գործը հասավ դատարանին, Սաադին իր խոսքն ասեց.  
Թե՛ աղչիկը ինչ մեղք ունի այս վատ գործի մեջ ծախող  
Երբ դողդողուն քո մեռերը գոհար պահել չես կարող<sup>355</sup>:

354 Արմենուի Մրապան. Հովհաննես Երզնկացի, ուսումնասիրություն և բնագրեր, Երևան, 1958, էջ 160 (ապտեմբուս' Հովհաննես Երզնկացի, Բնագրեր):

355 Մրապան էջ Գեց Սաադի, քարգմ. Ա. Մելիք-Վարդանյանը, Երևան, 1958, էջ 181:

Բացի ակնհայտ բառախաղից (Փռհար-գռհար), Հեռաքրքիր է թեմայի ձևավորումը Հեռեյայ երբքին կառույցի վրա՝ Փռանկար-մեր իր, անարժան տնր, կորուստ, ողբ, որը մեր կարծիքով աստ-վածաշնչային էթիկայի Հեռավոր արժագանքն է. «Ար արկանէք զմարգարիտ մեր առաջի խոզաց, զի մի առ սոն կոխիցեն զնոսա, և զարձեայ երգիծուցանիցեն զձեզ»<sup>356</sup>, կամ «...Եւ զտեայ մի պատուական մարգարիտ՝ երթեայ վանանեաց զամենայն զոր ինչ ունէր, եւ զեւեաց զայն մարգարիտ»<sup>357</sup>: Հայոց արժասական բարանում գռհարը պահպանական-պարսկական ծագում ունի, որ ակնհայտ քար է նշանակում: Իրա արարական մեք ճռհարն է, որ նույնպես թանկագին քար է<sup>358</sup>: Հայկազյան բառարանում «Ակն կամ քար պատուական»<sup>359</sup>: Պարսկերեն բացարական բառարանում այն մարգարիտ իմաստն ունի<sup>360</sup>:

Հայրեն.

Աւաղ զայն, որ շատ դատիս,

Մարդ չկայ, որ զեյն ճանչէ.

Հաշուէ թե ճոհար ունի,

Ի ի խոզուն առչն կու վարէ,

Խոզն զճոհարն ո՞նց ճանչէ.

Զորն ի բուն զաղբըն կու փորէ:

Կոխէ նայ զքո ճոհարն,

Ու դնչովն զքեզ կու դեղէ<sup>361</sup>:

Ստագիրի և Երզնկացու պոեզիայում արտացոլված երևույթը Համբեղ-Հանուր մարդկային արագարանության մասնավոր դեպքերից մեկն է:

Հովհաննես Երզնկացու վեպը նշված Հայրենի բառարանը

356 Ազնուարան ըստ Մատթեոսի, է. 6:

357 Նույն տեղում, ԹԳ, 46:

358 Հ. Աճառյան, Հայերեն արժասական բառարան, Թ. Ա. Երևան, 1971:

359 Նոր բառգիրք ճակատագրան լեզուի, Թ. առաջին, Երևան, 1979:

360 Քոթոնյան է՝ Նաթ, ԹԻԳՐԱՆ, 1336:

361 Հայրեններ, էջ 353:

բնորոշ է նրա ուղի ստեղծագործությանը, ուր բազմիցս օգտագործում է, որինակ, ճոճար բառը, սակայն այլ իմաստով: 1281-1284 թթ. հանապարհորդելով Մերձավոր Արևելքում, նա մտախնայ ծանոթացել է մահադեպիստ աշխարհի գիտությունները: Ենթադրվում է, որ Կիլիկիայի գիտնականների հետ համադրականացած (նրանց, ավելի անմիջական շփման մեջ էին արարապարտից աշխարհի հետ) նա շարադրել է իր «Ի տանկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք» բնագիրը սոփիստիկական աշխատասիրությունները, ուր անդրադարձել է նյութին, առաջնային էությունները, որ նույնպես ճոճար է կոչվում<sup>362</sup>: Վերջ բերված որինակներում մեկ անգամ էս ընդգծվում է անհատական և քուչակյան կոչվող Հայրենի ընդհանրությունները, գրանց ծագումնաբանական կապը՝ աշխարհ, այն, որ Հայրենը զուտ Հայոց երևույթ է և մեծագույնից է ժողովրդի ընդերքում ու սենյ անհատական արգիստը:

Երգնկացուց մեզ Հասած Հայրեններում Հեռաբերքի են նրա բանաստեղծական Հեռանքները բնագիրը սոփիստիկական տերմինների միջոցով, որոնք աշխույժ և կենսախինջ վերաբուրադրում են բրիտանոսեական հարատև գիլեման՝ Հոգի թե՛ մարմին:

Չաչս չորս իրար ո՞նց սազեմ, ամեն մէկ յինքըն կու ցաշէ,  
 Չոր Հոգըս խուշկիկ առնէ, շուրքս զէն կու ցըրտացնէ,  
 Քանմն զիս յերեք ունի, կըրակի՞ն բոցըն կու վառէ<sup>363</sup>:

Չորս տարբեր իրացման Հեռաբերք մենք տեսնում ենք զեռես Ռուզաբիի և Նարեկացու պոեզիայում:

Նարեկացի.

-Քանզի թէ եւ ի փառս ամատորութեանց սքանչելեաց մեծիդ՝  
 Հակառակաբց Քանդերմեցեր զկազմած մարդոյս,  
 Չոմն՝ ծանր, եւ զոմն՝ թեթեւ,  
 Չմին՝ զոգ, եւ զմիւսն՝ ճրային,

362 Հմմտ. Ս. Արևշատյան, Հովհաննես Երզնկացու իմաստասիրական աճապարհ աշխատությունը, էջ 298:

363 Հովհաննես Երզնկացի, Քնարեր, էջ 161-162:

Ձի դիմադրութիւնն ի հակառակացն հարք պահեցեալ՝  
Արշա՛ր կոչեսցուք հաւատարիմ հաւասարութեամբն<sup>364</sup>:

«Չորս տարրերից յուրաքանչյուրը (եզնիկը գրանք անվա-  
նում է Հյուզ, նյութ կամ բնություն), այդ ուսմունքի համաձայն,  
կյանքի կոչվելով արարչից, ստացած է երկու այնպիսի ներհակ  
հասկանիչներով (հուրը շոր է և ջերմ, սղը՝ ջերմ և խոնավ, ջուրը՝  
խոնավ և ցուրտ, հողը՝ ցուրտ և շոր), որոնցով հակադրութեան  
մեջ է մտնում և կամ միավորվում, հաշտվում մյուսի հետ՝ հա-  
տասանելով, կործան, սիրտ և ստեղծութեան խորհուրդը<sup>365</sup>»։ Ըստ  
բունմ, ամեն մի հեղինակ յուրովի լուծում է առաջն գրանց։ Բնա-  
փիլիսոփաների պոեզիայում այն համապատասխանում է սեփա-  
կան գիտական տեսութայուններին, արքունական բանաստեղծի  
մտա գրանք զարգարանքի և սրամիտ ու նկուն պատկերի տեսք  
են ստանում։ Առաջինների պոեզիայում գրա գործառութեանը  
գիտական-ուսուցողական է, մյուսների մտա՝ վարպետութեան ա-  
պացույց, գովասանք կամ պարզ և ստանալու միջոց։

Եթե վերը նշված հայերնը համեմատենք Հովհաննես Երզնկա-  
ցու հիշատակված գիտական աշխատասիրութեան մի փոքր հատ-  
վածի հետ, մեկ անգամ ևս կհամոզվենք մեր գրույթի խելությա-  
նը, ինչպես նաև Երզնկացու նմանափոխ հայերենների պատկանե-  
լութեանը։ «Չորս տարրերս սևս խոսս կոչին...», «Շառաւիղն է  
լուսոյն պատկեր, ջերմութիւնն՝ հրոյն, և գինութիւն՝ ջրոյն, և  
տարութիւն և հովութիւն և շարժումն՝ սղոյն, հովութիւն և շո-  
րութիւն՝ հողն և սոցա տարրերս պատահմամբ տեսակ ընդունին  
և ոչ մնացական, այլ փոփոխական, որպէս ջուրն, որ ջերմանայ,  
և հողն տաքանայ և այլ այնպիսիք. ոգն ցրտանայ»<sup>366</sup>:

Սալամը, վերադարձնելով ավանդական հակաթեզերի թե-  
ման, իր ստեղծագործութեանը հազարգում է երկու սկիզբ՝ փիլի-  
սոփայական և բանաստեղծական։ Ահա որինակ՝

364 Գրիգոր Նարեկացի, Մատենացի տպագրութեան, Թան 22 (տ)

365 Ն. Ե. Կ. տեղում, Մանդրապոլստիցներ, էջ 1021:

366 Տե՛ս Ա. Արեշտարան, Երգ. աշխ., էջ 305:

Իմաստուցներն հետ հաղորդակցվիր.

չէ՞ որ քո մարմնի էությունը.

Փոշից, զնփյուռը, կայծն ու կարծիք են<sup>367</sup>:

Բեյթի իմաստը կառուցված է Հուսնական փիլիսոփայության, Ինչպես նաև էջն Արևայի այն գրույթի հիման վրա. ըստ որի՝ բացի Հոգից, Ղրից, ոգից և կրակից ունեացած բոլոր մարմինները կազմվում են գրանցից<sup>368</sup>: Իրերի գոյությունը իրականանում է այդ չորս տարրերի իրար փոխանցվելու միջոցով. Ինչպես որինակ ողջ գտնում է Ղուր, Հոգը՝ Ղուր, Ղուրը՝ Հոգ, Ինչպես նաև՝ կրակ<sup>369</sup>:

Անշուկյան շահ Սահջարի արքունական բանաստեղծ Մանգզին, ակնարկելով ոչոստափառ եվեր, գրում է.

Լենց շահը տեսնի իմ տաղանդի հրանը,

Հողից ինձ մինչ երկինք կրարձրացնի,

Լենց լսի երկու քնյք չրի պես (զուլալ),

Մի քրաշալի ցմուլզ կնձիրի՝ քանու ցման (սուրացող)<sup>370</sup>:

Ֆրանսիացի մի Հնասպասող Հայտարարում է. «...Նահապետ Քուշակ ինձի շատ բարձր կը թուի Օմար Խայամին...», «...պարսկերեն տաղիկները բառական թարգմանություններուն մէջ կերելան միտքիեակ, արուեստակեալ, յանախ ցուրտ, իմաստով և պատկերներով ազգաս: Նահապետ Քուշակ ընդհակառակն՝ հոխուրթիւնը, ջերմութիւնը, բնականութիւնն իսկ է»<sup>371</sup>: Այսինքն՝ Երանից, որ «Օմար Խայամի քուշակները պարսից պոեզիայում նոր սրակ են, քոնից<sup>372</sup> թմանների բազմազանությունից զեպի փիլիսոփայա-

367 Տե՛ս Ա. Կ. Կարան, Բնակ և սոստանակոյ ոտանո ըս փարս 10-12 աս., Երևան, 1981, ժր. 85:

368 Տե՛ս Բ. Կ. Մանու, Յուսու-Յուսու, Մ., 1968, ժր. 182

369 Լճն, Շույն տեղում, էջ 86:

370 Գիվան-է Մեղզի, Քննարկ, 1318, ոտրաւար:

371 -Հայրենցներու քուշակները, էջ 121:

372 Այս արականը արտաքին անվամբ տվել ենք մեր ակնհայտությունում ("Փարսագրանոյ քյան և սոստանակոյ ոտանո ըս փարս 10-12 աս. Աստորափար ուն զու. Մ. 1976") և հշված «Բնակ...» մեծագրությունում (էջ 79), որը մեծագրում

կան ազատախոհության սյուրա: Ժաներային մեկ բարձրագույն կետք, որպիսին իրավամբ համարվում են այդ քառյակները, ենթադրում է երկու հատկանիշ, առաջին՝ ժառանգականություն, ետևորդների նվաճումների որոշակի կատարելագործում և երկրորդ՝ մի նոր, արձատական, սրական փոփոխություն: Երկու հատկանիշներն էլ բնորոշ են զբանջի: Հեյլուեային և սիթմա-մեդեկային հնարանները փոխարինելու են գալիս ետևորդների զարգացանդակ, բարդ ու երբանայակ պատկերների համակարգին և մեղմում են նրա անպանույն, ռաջիոնալիստական սեռ: «Աստուծայանք» բացարձակ սուբյեկտիվ որակում է, չուժի գիտական հասակ չափանիշ:

Նրա քառյակները ծանրաբեռնված են սպիտակախոսական փիլիսոփայական լիցքով, սոցիալական երգիծանքով, ըմբոստաստավածուրացություններ, որով և զուրս են գալիս պարսկական արքունական պոեզիայի համատեքստից և նոր որակ են բերում այդ գրականությանը: Ասվածը արդեն հակասում է նրա «միտոս-նակ» որակմանը: Ինչ վերաբերում է բուշակյան հայրենների «ճոխությունը», ապա զա թերևս առավել բնորոշ էլլիներ Գրիգորիս Ազիմամարցու կամ Հովհաննես Թլիսուրանցու տաղերին: Հայրեններն անպանույն են, պատկերները՝ զգայական, մոտ մոզովրդական անմիջական ոգուժ, նրանց բնորոշ է կենցաղային-սամկական տեսարանների նկարագրություն, կերպարների բազմազանություն, լիզվառնական պարզություն: Հայրենների մասին վազուց հայտնված կարծիքները և գնահատականները բերվում են միմիային նշելու համար, որ երբ սկզբունքորեն ճիշտ չեն համեմատության ելակետերը, ապա ճիշտ չեն լինում նաև եզրահանմանները: Նշված համեմատության մեջ ընդհանրությունները գուժները: Նշված համեմատության մեջ ընդհանրությունները մեկ (քառյակ-հայրեն) սահմաններից զուրս չեն գալիս: Հայրենները չուժեն իրական խոհական լիցք, զրա փոխարեն նրանց մի

Մուլլի աշխատանքում կատարված այլ եզրահանգումների մաս մանկ է «Համալսարանային գրականության արտոմուտում» հանրագիտարան (տե՛ս Խորհրդային ԽՍՀՄ-ի Գրականության, 1984, էջ 272)

մառը հազեցած է բարոյախրատական ոգով: Այսինքն ունայնու-  
թեանը վերաբերող փիլիսոփայական մտորումները առանձնապես  
բնորոշ չեն հայրենեակին:

*Օմար Խայամ.*

Տեսա տանիքին միայնակ մի մարդու,  
Որ ուղքով հարվածում էր ու ճզմում կազը (հողը),  
Այդ կազը (հողը) մարդկային ձայնով ասաց-  
Բճակիչ (այս կյանքի), հարվածճեք ես տաճալու,  
Իճճ Գճճ<sup>374</sup>:

*Հայրեն.*

Մահալորս ի վար կուզի, ճայ տեսալ չոր գանկ մի պանկան.  
Ոտորս ալ բսպալ տրի, ճա երեսս ի վար ձիճաղաց.  
Գարձաւ ու պատասխանեց,  
Ճես գըճա, կըտրիճ շըփացած, էրէկ քեզի պէս էի,  
Ախոր գիս այս հալս է ձգած<sup>375</sup>:

*Օմար Խայամը կյանքի և մահվան հակասությունն ու գիտ-  
լիկախիական արտազդույց մի ամբողջ շարք ունի, երբ աշխարհի հա-  
վերժության գաղափարի խորքի վրա ընդգծվում է մարդկային  
կյանքի ունայնությունը: Նյութի հարաբերությունն իր գե-  
ղարվեստական շունչումն է ստանում Խայամի սիրելի «Հերոսի»  
արհեստավոր-բրուտի գործունեությունը: Այդ քառյակները այն  
ստեղծանքն են, որ հավաքվում էին Հենց Խայամի անվան  
չուրջ: Մեր կարծիքով վերը նշված Հայրենը առանձնապես չի  
համապատասխանում Հայրենեակի ընդհանուր ոգուն: Հնարավոր  
է, որ այն իսլամյան քառյակների նշված շարքի մի տարրերակն  
է, մեկը այն Հարյուրներից, որ շրջում էր արևելյան ժողովուրդ-  
ների մեջ՝ անընդհատ տարափոխվելով և նորերը մեկով:*

*Էլիս ելենեք ժամանակակից լեզվաոճարանություն այն ընդ-  
հանրացումից, թե որքան ցածր է պոպուլյարիզացրած հանրա-*

374 Սադեկ Հեյաթար, Թարսնճա-ն Խայամ, ԹՆՃրան, 1339, 89.

375 -Հաջոնճեք, էջ 185:

կանությունը, այնքան ավելի ուշ շրջանի է այն պատկանում<sup>176</sup>, ապա կտեսնենք, որ «զանկը» Հայրենիների Համահավաքում Համարյա թե չի Հանդիպում: Կան բարձր Հանախականություն ունեցող բառեր՝ ազա, մանչ, նոհար, կաուր, շապիկ, ծոց, պազ, մահալ և այլն:

Քաղմաթիվ Հետազոտողներ Համերաշխ են այն Հարցում, որ Հայրենիները քաղաքային կյանքի արտացոլում են: Այստեղից էլ Հարկ է ակնել Հայրենիների Համեմատությունը պարսից պոեզիայի հետ՝ Հեռանալով մեզ արգեն ծանոթ նրբահաշակ, բարդ արքունական արժեատից և ընդհանրություններ որտեղից քաղաքային բանաստեղծության նմուշների հետ:

Հնարաժող է՝ Նահապետ Քուշակը խնկապես ապրել է 16-րդ դարում, Հավաքել ու գրի է առել Հայրենիներ, գուցե նաև ստեղծագործել է այդ ժանրային մեծ, սակայն արգեն վերջ նշված Հանդամանքները ստիպում են կարծել, որ փառք ժանրային մեծը վաղուց են ապրել մոզոմբոզի մեջ և պոետիկայի քաղմաթիվ տարրեր Հենց այնտեղից են մուտք գործել մեր սաղասացների պոեզիա: Անշուշտ, մոզոմբոզը իր ուրախության և տոների մամուկ նարեկացու «Տազ ազնիւ» չէ, որ արտասանում ու երգում էր:

Մանուկ Արեղյանը, մեկ առ մեկ քննելով Հայրենիները, Համեմատելով դրանց ոնցեպոյի ենթարկված տարրերակները, ցույց է տվել Հայրենիների զարգացումը՝ նրանցում ավանդականության և նարարարության աստիճանը, սաղաշափական առանձնահատկությունները և զուտ Հայկական ծագումը, կապը մոզոմբոզական երգի հետ, ինչպես նաև այն, որ դրանք գոյություն են ունեցել 16-րդ դարից առաջ: «Գրանք (Հայրենիները-Ա.Կ.) բերանացի ավանդված սաղեր են եղել, և մեկ ժամանակի և մեկ անհատի սակզագործություն չեն, այլ ընդհանրապես, գրանց վրա աշխատել են քաղմաթիվ սերունդներ և դրանք փո-

576 В. М. Арапов, М. М. Херц, Маломеждународные методы в исторической лингвистике, М., 1974, стр. 3.



փոխության, փերամշակության և զարգացում են կրել ու բնականաբար, երգիչների ընթանին երգվելու ժամանակ, այն էլ զարեւրի ընթացքում: Ուրիշ խոսքով՝ այդ փոքրիկ տաղերն ապրել են ժողովրդական երգերի կյանքով և իբրև ժողովրդական երգեր զրի են սունձած գանազան ժամանակներում, տեղերում և՛՝ գանազան մարզկանց մեջքով: Ուստի և մեկմեկուց տարրեր տաղաշարքերով և բազմազան վարժանաներով, հիշա այնպես, ինչպես մեր ժամանակի ժողովրդական երգերի ժողովածուներն են»<sup>377</sup>:

Հայրենների տաղաշարքները ոչտաղադրմիկ է մեր գասականների պեղծարարում, այն ծանոթ է եղել Նարեկացուն, ԵնորՀայուն:

Հայրենները համեմատելով ուրաշիի և գորեյիիի Հեա՝ Մ. Արեղյանը գրում է. «Ստանափորի տեսակն արմեր չունի: Ամեն տեսակի չափերով էլ կարող են բեյթափոր քառյակներ հորինվել հանգերի գոտափորությամբ»<sup>378</sup>: Անշուշտ փոքր ժանրային մեղը բազմաթիվ ընդհանրություններ ունեն. գրանց ժողովրդական ծագումը, երգային բնույթը, հանաթ տեսանուն լինելը, բազմաթիվ տարրերակները, որպես գրական ժանրային մե նրանց կազմափորման ու բյուրեղացման ընթացքը են, իրենց մեջ նմանություններ են կրում, սակայն փերապահելի է Արեղյանի վերը նշված համոզումը, քանի որ պարզական փոքր ժանրային մեջ՝ ուրաշի, հասակորեն կանանարկված է և «ամեն տեսակի» չափով չի կարելի այն ստեղծել: Բայցի հասուն հանգափորումից և չորս տողերից, ուրաշի ունի որոշակի 24 չափ, որից ամենաներքերանգային շեղումը տեղամ, ընկալելի իհարկե միայն սափոր ականջին, ուրաշի կարող է զարմնել գորեյիի կամ թարանն: Նշված հանգափորումով, սակայն այլ քանաստեղծական չափով գրված չորս տողը կկոչվի բեկոր (գաթի), գորեյիի, սակայն ոչ ուրաշի: Այդ է պատճառը, որ պարսից միջնագաղաթյան ժողկարգաթաղ-թաղքարեններում կամ զիվաններում նախապես ժանրային մեի տեսու-

377 Մ. Արեղյան, Մրճեր, Ե. Բ., էջ 126:

378 Նույն տեղում, էջ 30:



որոնց շորս առջինն էլ Հանգափորում են, այսպես պետք է նշել, որ երկու մեծ էլ Համասարապետ քնորոշ են քառյակին, սակայն շորս առջերի Հանգափորումը Համարում է առաջինը Հնառն, քնորոշ է ժողովրդական քառյակին, իսկ երրորդ՝ անհանգ առջուց քառյակները՝ մշակված և զբափոր քառյակի գասական մեկին: Ըստ Հաշվումների՝ պարսիկական գասական քառյակների 70 %-ը Հանգափորում է ԱԱ ԲԱ մեկով<sup>382</sup>:

Հանս Փեթքեն, որը Հայտնի էր որդես Հաֆեզի յափագույն Քարզմանիչ, Հայրենիների Հրատարակություն անաշարանում գրել է. «Քուշակի բանաստեղծությունները բազկացած են մեկ քանի հարիւր տաղիկներով, որոնք մեծ ժառանգ քառանկներ են: Արաայայաութեան այդ մեծ զոր «Արևելքի Հեշեակը» կարելի է անուանել, ան փոխ է աներ պարսիկներին, որ իրենք այ գայն արարներին առան են»<sup>383</sup>:

Ոչ պարսիկներն են քառյակը փոխ առել արարներից և ոչ էլ Հայերը՝ պարսիկներից: Քառյակը՝ ուրային, իր ծագումով զուտ իրանական երևույթ է, նրա հոգևոր մշակույթի անքակտելի մասը, առանց որի չի կարելի ամբողջական պատկերացում կազմել պարսից միջնադարյան գասական զբակն ժառանգություն, փյիխոփայական (Սայամ) և կրոնական (սուֆիզմ) մտքի զաղացման բազմաթիվ հարցերի վերարերյայ: Այն անվել է իրանական բանահյուսությունից և երկար ու միզ դարերի ընթացքում փոփոխվելով պահպանել է իր կապը ժողովրդական ստեղծագործ ոգու Հետ: Նրա բանաստեղծական շափի արմատները որոշ Հնաագուստներ սանում են զեպի զբազաշտական Սուրբ զԻՐՔԸ՝ Ավեստան: Միշտ է, այն արարներն թառ է, որ նշանակում է քառասուղ, սակայն արարական պեղզիան անտեղյակ է եղել քառյակի մեկին, և միայն ուշ շրջանում են արար բանաստեղծները գրել այդ ոտարածին ժանրային մեծով պարսիկներն թարան և գարեթի անվանումները փոխարինելով արարական ուրայիով: Ինչ վերարերում

382 L. P. Elwell-Sutton, *The Persian metres*, Cambridge, 1976, p. 254.

383 «Հայրենիք» քառասուղ, էջ 124:

է Հայրենին, ապա, ինչպես արգեն նշեցինք նրա տաղաշարու-  
 թյունը վաղուց է ծանոթ մեր բանաստեղծներին: Բացի այդ, քո-  
 լոր ժողովուրդների բանավոր ստեղծագործութիւնը բնորոշ են  
 նկուն, փոքր, երգային ժանրային մեները<sup>384</sup>: Հայրենիների և քա-  
 յակների լեզվա-սեռական և զազափարսկան առանձնահատկու-  
 թյունների քննութիւնը ցույց է տալիս, որ այդ շրջանում շեղ-  
 Հանուր արեւելյան աշխարհում կենսունակ էին սամիկ սեր և թե-  
 մաները, որոնք մուտք էին գործում գրավոր գրականութիւն:  
 Տեղի էր ունենում շրջանառութիւն, երբ ժողովրդական ստեղծա-  
 գործութիւնը մտնում էր անհատական արվեստ, մշակվում,  
 հզկվում: Այդ երևույթը երկու գրականութիւններում էլ փուլա-  
 յին-տիպարական է: Նրա վառ որինակներից մեկն է Հայոց  
 դասական տաղերգութիւն մեջ սիրտ առաջնութիւն, սերը Հավա-  
 տից վեր գտեսչու, կրոնավորին երգիծական կրանգով ներկայաց-  
 նելու երևույթը, ինչպես նաև՝ ակֆիճելի արժեքները (քաղաքներ  
 երկրներ) սիրուհուն եփրեղչու և այլ զազափարկեր, որոնք առա-  
 վել ընդգծված են Հայրենիներում և առաջիկ զգայական երանգ  
 ունեն.

Քո ծոցը է ներմակ տանար, քո ծրծրդ է կանքդ ի վառ,  
 Երբամ ես ծամկոչ բլլամ, գամ լիճիմ տանրիդ  
 լուսարար...<sup>385</sup>.

Թամիկ սեր և թեմաները պարսից մեջ 12-րդ դարում մուտք  
 են գործում նույնիսկ արքունիք, և արքունական ծրագրային  
 մանրը՝ զասիզեն (Ներբող), նմանապես ենթարկվում է այդ նոր  
 ուղղութիւնը<sup>386</sup>:

384 Դրանցից են, միջնադարում պարսից քարանին, քրոջական ճանին, ուս-  
 սական շատտուշկան, ֆաղեմական թանկան ևն:

385 Հայրենիների քաղաքաներ, էջ 168

386 Այդ են ցույց տալիս մեզ հասած բանաստեղծության միջուկները Սուգա-  
 ցի, Անդու, Թաշիդի և այլոց միջև, որոնք ճամբարով Քսենէն են վերմա-  
 նաւով Ներկայացուցիչները՝ գնահատելով ըմբոստ, հաճախ կուստ ու բայ  
 երգիծանքը, սուր միտքը, հանգի բարդութիւնը: Անվանի երգիծանք-պար-  
 սավազներով հաստատու են այն է ընկել Սուգանի Սամարղանդից (այդ մա-

Հայոց մեջ առաջնորդութեան չեզոքին (միջին Հայերենին), որը որդեն գրականութեան գեմոկրատացման փաստերից մեկն է- գումարում է նաև աշխարհիկ բովանդակութեանը: Իսկ ցայսօրեւ երևում է Միքիմար Գոշի սրամիտ, շարժուն, մոզոլորդի կենցաղն ու առարկան արտացոլող գրույց-առակներին:

Նշված դարերում տարածաշրջանում սոցիալ-պատմական այնպիսի գործոններ կային, որ ավելի ու ավելի միասնական էին դարձնում այնտեղ ընկերոջ ազգերի մշտումները, վարքագիծը, սանգձագործ ոգին: Դրանցից էին արհեստավորական եղբայրութեանները, որոնք իրենց կառուցվածքով և Հարաբերութեանների մշակված սանդղակով (վարպետ-աշակերտ, սսթաղ-շաղկերդ), չթիկեմին խիստ ենթարկվելու պարտավորութեամբ արտացոլում էին ավատատիրական Հասարակարգի մոզելը: Օրինակ՝ Հայոց մեջ 12-13-րդ դդ. դարզացած քաղաքներից մեկում Երզնկայում, գործն է եղբայրութեան: Նրա անդամների վարքն ու չթիկեմար կարգավորող կանոնագրութեանը մեզ է Հասնել «Սահմանք» անվամբ: Հայտնի «Ախի» կոչվող եղբայրութեանը իր տարաեսն չթիկեմական և կրոնական կազմով միավորում էր արհեստավոր-առևտրական գասի մեծ զանգված<sup>387</sup>: Արժեքները, որոնք մեավորում էին տարածաշրջանի բոլոր եղբայրութեանների անդամների բարոյականութեանը միասնականութեան էին արտահայտում մեծահոգութեան, պատվախնդրութեան, Հանդուրձողականութեան, արիւթութեան<sup>388</sup>: «Մանկատիք, երբ է Հոջ նստիք, մենեղէք ազքատք

---

սիճ տե՛ս Բաղի ու- զաման Խորզանքար, Արխան զա սիխանվարան, չափ-է դոզմ, ՔԻՔրան, 1350, Կ. 317):

387 Եղբայրությունների հասկանալու «Ախի» մեջ էի՞ն Սերգուվան Սաև սուփիզմի հետևորդ դերվիշներ և միտիկ, քախտական, աղաղակալարդար-նազմած բազմաթիվ տարրեր: Սուփիզմի կապը սոջ եղբայրությունների հետ հետևորդիքի և առավելագույն շտաումնափրված ընտանավան է: Ախիի ծագումնաբանությունը տարրեր մեկնարահություններ է ստացել: Այն կապվել է արարեին՝ եղբայր քատի հետ, սակայն ճնարակոր է, որ քրտրցական ծագում ունի և զնանակում է «ստատանեմ» (վերջինիս մասին տե՛ս Բ. Կաստուր, *Atlas des archéopastoraux of Islam*, V. 1, fascicules 6, Leiden-London, 1956, p. 32):

388 Եղբայրությունների գեմոկրատական, հումանիտարական ինստիտուտը ավելի ուշ՝ 16-րդ դարում, Քրտրցիայում ազլանդվել և ազգայնամոլ ու անհաս-

ձեզ ընկեր»<sup>389</sup> կամ «Եւ խաղաղասէրք լինին եղբարքս մեր ի մէջ աշխարհի, ընդ ամենայն ազգ մարդկան սիրով անխնայն զասել եւ զլսել, որ ամենայն ազգէ իմաստունք լինին՝ մեծարեացին եւ յիմաստութենէն շահեացին՝ առանց հակառակութեան»<sup>390</sup> եւ այլ հայտարարությունները գրա Վառ սրինակներն են:

Անշուկյան շրջանի ողջ մշակույթը իր բոլոր գրեւորումներով քրիստոնեանմանձեցական համագործակցության արգլուներ էր: Հատուկ քննության է արժանի այն խառնարանը, որում մեւափորվում էր պարսից, հայոց, վրաց եւ կովկասյան այլ մտգութւոյրդներէ հոգևոր արժեքներէ սինթեզը եւ այն հանգուրժողականությունը, որ իրականում մերժեցնում էր այնտեղ ապրող տարբեր մտգութւոյրդներին եւ զարգացող քաղաքներում մեւափորվող տարբեր խավերին: Ըստ Հ. Օրբելու՝ «անշուկյան» կոչվող գիճատախական-էթնիկական տեղմինի սակ թաքնված է մի հրաշալի քաղաքակրթություն, երկու զար տեղոյ զարգացմամբ, հսկայամափայլ տարածքներում արժեստի տարբեր ուղղություններով ստեղծված հոյակապ եւ յուրոքինակ մի համույթ, որի ստեղծողները բազմաթիւ ազգեր են: Ավելին, «մահձեցական» տեղմինը ոչ միայն մշակութային, այլ նաև դաժանական է եւ ի՞նչ ընդգրկում բոլոր այն ստեղծագործ տարբերը, որոնք իրենց ենթգրումն են ունեցել «մահձեցական» մշակույթում<sup>391</sup>:

Այդ շրջանում այլազաման ազգերի բարեկամությունը իրական էր, հակասությունները՝ մեական: «Սույթան Թոքե-ազ Դինը

գործող քննութւոյ ստացավ: Իր զարգացման ընթացքում քրոնքական կարութեան կոմունակաւ եւ տնտեսական կրթութւ առանձնախառնութեանը մտածված ֆուտուրալը, իսկ ամենուրեք իմաստունում էր միջնադարում հասարակական մի հզոր ֆիմարթ, որում ընդգրկում էին միաշնամանակ կրթության եւ արհեստանոց եղող քարտ անասունը միայն-տնտ. Հ. Ս. Անանյան, Մանր յնովոր, Լու-Աճըլիս, 1987, էջ 587:

389 Հովհաննէս Երզնկացի, Բնագրեր, էջ 74:

390 Տե՛ս Լ. Ռալիկյան, Աշխատութեանը, Ե. Ա. Երևան, 1995, էջ 206: Հարմ. Է. Սուրբանի մեծորմն՝ Երզնկայի տիրականին էր Եվրոպական պարտն բար-հաստեղծ Կեղանի Գյանջլիի «Քաղաքներէն գաճմարան»- անույնի մարտ-թի մամար նա անասունն վարձատրվել էր:

391 Հմմտ. H. A. Qudus, *Medieval Armenian Epics*, 1963, стр. 162.

պահանջում էր թամարից, որ ուզեի ցանկանում են պահպանել իրենց կյանքը, իր աշքի առջև արտերն խաչը՝ քրիստոնեության խորհրդանիշը, իսկ քրիստոնյաները երգում են, որ Անիի տաճարներից դուրս կվտնվեն ժահճեցականներին, սակայն այդ բարբ քարացած քառեր էին, Հոգևորականության կոպմից թնայրված, իսկ կյանքը հարթեցնում է խորականությունը, մարդիկ ձգտում են իրար, նրանց մերժեցնում է սերը, հաղթում է գեղեցկությունը, հաղթում են ընդհանուր շահերը»<sup>392</sup>:

Գարնում ենք՝ աշտեղից է գալիս այն Հանգուրժուցականությունը, որը բնորոշ է հ՝ հայոց, հ՝ պարսից քաղաքային պոեզիայի նմուշներին: Դրանք գուրկ են զափանախան խորականությունից և կրոնական թեմաներից: Վերջինս, իհարկե գարմանույի չէ պարսից պոեզիայի համար, քանի որ ի սկզբանե այն աշխարհիկ բնույթ է ունեցել:

Նդրաշրջություններն իրենց մեջ ներառում էին Հատկապես երեսասարգ մարդկանց, որոնք տարբեր սեռուներով էին կոչվում. կտիրեներ (արար՝ ֆուխուլաթ), Երանում շափանմարդ, իսկ հարևան Վրաստանում «շարտրներն» էին կամ սցաուլաուները<sup>393</sup>» են: Զոմարդը, որ մինչև որս իր նախկին բովանդակությունն է պահպանել հայոց մեջ, ոչ այլ ինչ է, եթե ոչ Հենց նույն պարսից շափանմարդը:

Նդրաշրջությունները բոլորն էլ մասնակցում էին անանասական և քաղաքական կյանքի իրադարձություններին և մեծապես կոզմոսոբուցում և կարգավորում էին այն: Ինչ խոսք, այդ մթությունները Հասարակության սցածրն շերտում մեափայլուց իրենց անկամներով (արհեստագործներ, առևտրականներ, թափառական գերվիշներ ևն) պատահական չէին: Դա սոցիալ-պատմական պա-

392 Յե՛ն Յե. Գորմաշով, Государство средневековой Малой Азии, стр. 177:

393 Արքեպիսկոպոս և Արքեպիսկոպոսներ, իԳլյանա Գաև ԱՇորիկովիկան երկարությունՆՆՆՆի և երկարությունը ֆորտությունՆՆՆՆի մասին Բոնդարյանսկ գրադարանություն կա, վրաստանում վերաբերող մասը տե՛ս Մ. Յ. Գախաևան, На историко-этнографическом симпозиуме в Гречко 12 июля, в сб. "Кавказ и Восток", выпуск 4, Ереван, 1984, стр. 21-27:

Հանջ էր՝ կապված երիտասարդ մարդկանց՝ քաղաքային տարրերի տկարացման, շուկայի գերի բարձրացման, ցեխային-արհեստավոր խավի ձևավորման, Հասարակության մեջ փոքր մարզու գերի աշխուժացման հետ:

Հայաստանում և Իրանում այդ ամենը արտացոլվում էր պոեզիայի նմուշներում, Հատկապես փոքր ժանրային ձևերում (քառյակ, Հայքեն), որոնք իրենց Հանդարաստի բնույթով արագորեն Հարմարվում էին ժամանակի ոգուն և թափանցում Հասարակության տարրեր շերտեր<sup>394</sup>: Վերջինիս պետք է վերագրել տարածաշրջանում փոքր ժանրային ձևերի բուն զարգացումը, որը պատասխանում էր նոր ձևավորված յարարների պահանջներին, և որոնց առանձնահատկությունն էր պերնաշուք ոճի անկումը և ժողովրդական թեմաների մուտքը գրավոր գրականության: Գարսից մեջ քառյակի այդպիսի ժողովրդականացմանը նպաստում էր նաև մեզ արդեն Հայտնի սուֆիզմի գաղափարախոսությունը:

Քաղաքային պոեզիան բազմազան է: Այն կատարում է ոչ միայն գեղարդիտական, այլ նաև Հասարակական կոզմոքոսման և գաղափարախոսական գեր<sup>395</sup>: Բանաստեղծներից ոմանք անմիջականորեն կապված են արհեստավոր խավերի հետ, մյուսները՝ առավելապես արտահայտում են քաղաքացու տեղատեղական ինքնագիտակցությունը:

Գարսից պոեզիայում Հայքենների հետ բազմաթիվ ընդհանրություններ ունեցող քառյակների մի շերտ կա, որ ավանդակներին վերագրվում է բանաստեղծուհի Մահաթթին: Հետ մասեկադիր Դովլաթշահ Սամարգանդիի՝ Մահաթթին եղել է նեպաժիր

394 Տե՛ս Ա. Կ. Կուստոս, *Միջնադարի արևելա-արևմտյան քաղաքային պոեզիան* քրեմ և 12 ԹԿ, ԵՊՀ, 1984, է. Էքսթ, օր. 43-49:

395 Հարկ է Գնել, որ սուֆիական քառյակն էլ է ձևազորվել քաղաքային միջավայրում և բնութագրվում է ինչպես ավանդական, այնպես էլ նորաստեղծ վարդում և բնութագրվում է ինչպես ավանդական, այնպես էլ նորաստեղծ վարդում: Մակայն փոքր ժանրային ձևն այդ տիպը պոեզիայի ընդհանուր գծերով: Մակայն փոքր ժանրային ձևն այդ տիպը պոեզիայի ընդհանուր գծերով: ինչպես արդեն ցույց ենք տվել աշխատանքի առաջին հատվածում, պոեզիան էլ տարբեր մոտեցումներ և դրանց բնույթ, ձև և բովանդակության տարրեր զննարտական:



և կայսրի ժամանակացը: Նրա կենսագրութեան շատ կապում  
 առեղծվածներից մեկը այն է, որ իբրև թե լինելով շահ Ասեղարի  
 համահուհին՝ Քաչուն սիրել է մի ժամանառ պատանու: Եթե  
 պարոնց մեջ բաժանակցիների գրական տեսւնը կամ արտգոյր  
 (լազար, Նիսրա) վկայում էին որոշակի երևույթ (գրազմուեք-  
 մեկգազմաբ էն), ապա Մահաթի, Միհաթի, Մահաթի անվա-  
 նուժը մեզ ոչ մի որոշակի բան չի տուում: Դեռ ավելին, այդ ան-  
 վանուժը բազմաթիվ ենթադրութեանների և կուսուժանների առթիվ  
 է ավել: Մահաթի խանուժի կերպարը միջնագարյան շատ բա-  
 նաստեղծների նման ծածկված է ժամանակի մշուշով, պատված  
 լեզվեղներով, առասպելներով, իսկ նրան եզիրված հիշատակու-  
 թյունները՝ արված իր ժամանակակիցների կամ գուցե Հեռուորդ-  
 ների կողմից, հանցում են նրա անվան փաստմանը՝ առանց որևէ  
 էական տեղեկութեան: Ըստ առասպելներից մեկի՝ նա եղել է գե-  
 ղեցիուհի և վարպետարեն սակզմագործել է հրապրումար մեով:  
 Նրա անվան ծագումնաբանութեանը եզիրված գիտելը ասորեր  
 եղբունանցումներ են մեկ: Ոմանք այն կապում են Մահաթիին  
 գիմելու մեկ շեռ միհ ասթի՝ գու մեծ ես, կամ մահ ասթի՝ գու  
 շուսի ես: Կա նաև այլ ասորերանկ. Ե. Քերտեչար գտնում է, որ  
 մեհ սթիի նշանակում է մեծ արկի, Հեռուարյան խանուժ-է ք-  
 զորդ, որը «—կնոջ պատվամար արտգու լինելով և կրկնվելով  
 ասորեր արքունիքներում բերեց զեղեցիուհու, հրաշայի երգչու-  
 հու և հրապրումար վարպետի գրական կերպարի մեավորմանը:  
 Մի քնորոշ առանձնահատկութեան, Մահաթիին գերազրից  
 քառյակների մեծ մասը Հույժ անվանել բնույթ ունեն: Եթե հաշվի  
 առնենք, թե ինչ գերում էր հանցեր գայիս այգպիսի երգչուհին,  
 ապա պարզ կգտնեա, որ ցիւրիցմի փառարանուժը կարող էր ար-  
 քունիքում նրան բացարձակ հաջողութեան ապահովել»<sup>196</sup>:

196 Fritz Meier, *Die schöne Malkazi*, Wiesbaden, 1963, s. 43. (տե՛ս Գալս Է. Զ. Եզրեու, *Պես-  
 սու և Փշչոու, Մ.*, 1962, սր. 78-80):

Մահաթիի և Սեմուզ Սեթիի ողբերգական սիրո պատմությանը է Եզիրված  
 12-րդ դարի պարսեց թանգուտեղծ Ջաֆարի անեղծագործությունը (տե՛ս Է.  
 Brno, *A literary history of Persia*, v. 2, Cambridge, 1964, pp. 344-45):

Մաւհաթիբի դիմանում պահպանված բանաստեղծութուններին մեջ Հանդիպում են «Քափառոզ» քառյակներ, որպիսիք կարող ենք գտնել տարրեր բանաստեղծների դիմաններում: Քուչակյան Հայրենիների և խայսամյան քառյակների նման գրանց իսկությունը ևս հավաստի չէ: Հարկով, անկաշուն տեքստարանական Հիմքը երբեմն անհնար է զարկնում վերջումությունը: Մակայն, այս պարագայում, կարևոր ենք համարում գրական փաստը. այն է՝ երկու գրականութուններում գոյություն ունի քառյակների մի տեսակ՝ ավանդականորեն նախամին, Մաւհաթիբի և Քուչակի վերագոյոզ, որը, անկախ գրանց պատկանելութունից, Հարուստ եյութ է տալիս ոչ միայն 12-15-րդ դդ. արևելյան աշխարհում գորգացող գրական փոքր ժանրերից մեկի պատմության, այլև տարածաշրջանում գրական նոր ուղղվածության, կողմնորոշման, այդ մեների նոր գործառության և ժանրային համակարգում երանց կարգավիճակի մեափորման ուսումնասիրման համար: Դրանք ներառելով մեզ արդեն Հայտնի բանաստեղծության որոշակի «տեսակի» մեջ՝ մենք բնավ եղբայրական չենք գնում վերատեղծել կամ վերականգնել գեղեցկուհու կերպարը (ճիշտ այնպես, ինչպես որ մեզ չի հետաքրքրում Քուչակի անձը), այլ փորձում ենք ցույց տալ գրականության գորգացման ընթացքը, գրանում նոր որակի մեափորումը, ավանդական Հոստորական սերից Հնուացումը ևն:

Ճիշտ է, ժանրային նորմատիվությունը ամուր է պահում որոշ տարրեր (միացում-բաժանում, սեր-տատապահք, մշտական մեաափարային կախեաններ՝ վարդերես, լուսնապեմ, կեռահեք ևն), սակայն սերտ թեման տարրեր մեափարումներ է ստանում, սերային-զգարնայի, սերային-երգիծական, սերային-կենցաղային ևն: Անորյան, առանին սովորություն ու կյանքը սնում են բանաստեղծի երևակայությունը, և երանց ստեղծագործություններում ավանդական Հերոսների Հետ (գեղեցկուհի, մեկնեսա) ի Հայտ են գայիս ետերը, որոնք չեն չգարչված գույնով, փայլով, սրտքով, բույրով ևն:

Քույրակ

Խաչանցայ, ինչպես մի արի,  
Աճ գեշէն պազ մի ուզեցի.  
Աճ գեշէն աչ ի նազն էլաւ.  
-Չիմ ի տար անունս արքի-:  
Աղվոր մը ներսէն ի դուրս.  
Պագիկն աղվորէն ուզէ,  
Որ գիտէ խաթրը կըտփնին-<sup>397</sup>:

Մահաթի.

Երեկ սասացի այն դերձակ պատանուն.  
-Աստծո սիրուն, լավ տղա, գնանք ներս-:  
Ասաց. -Մեր միացման կապան (հազոտուտը) չառնես-.  
Ասացի. -Կլանցիս գնով էլ միացման կարը կաննմ-<sup>398</sup>:

*Մենք ակնածաւես ձեք աշխույժ երկիրտության ձագորդի մէջ պատագործող պարտկերեն. թյուրքերեն բասերը (ազգոր, միկննթ, խաթրը), ժոյնարանական միասնություն և սեմանտիկական բազմազանություն արտահայտող բառախաղը (պարզի՛ բա, դա՛ր գիլա՛, դա՛րդի բա, որ նշանակում է՝ դերձակ, ներս, կար), որամիտ և շարժուն սիրային մի մանրապատկեր է ստեղծում, որը եղբ շունի ցասական զնկորատիվ- սիրային պոեզիայի ճեւ:*

*Քաղաքային փոքր մանրային ձևերի ուսումնասիրությունը Հայոց և պարսից մէջ ցույց է տալիս, որ դրանց Հիմնական թեման սերն է. որանց ընդգծված է զգայական տարրը: Պարսից պոեզիայում Հեուաքթիթ է բունաստեղծությունների այն շարքը, որանց գործող պերսոնաձևերը արՀեստաճար կամ սուտրական պատանիներն են, որ մեկ անգամ ևս ընդգծում է նոր սոցիալական խափի մուտքը գրականություն և նրա դրած նոր պահանջները: Հայրեններում էլ այդ նոր խափը բազմիցս Հանդես է գալիս*

397 Հայրեններ, էջ 729.

398 Տե՛ս Դիլվան-է Մանասի, Քննրան, 1336, ս. 25 (արտոճեսն)՝ Մանասի, Դիվան:

տարրեր անվանումներով կարին, ժանշ, ժանուկ, ազա, եղբայր, մորե, պատանի, ժանչուկ են: Գեղեցիկ պատանիները զեռես եր մեափորփող պարտից պոեզիայում (Ռուզաբի) արգեն Հիշատակվում և գովերգվում էին, սակայն միայն այն շափով, որչափ որ տոնչվում էին արքունիքի թեմաներին<sup>399</sup>: Գեղեցիկ պատանու և երա ժասնագիտական գործունեության տարրեր ասանմահապայությունների պատկերումը պարտից գրականության մեջ հետագայում 15-16-րդ դդ., մեկ մի ուղղություն՝ «Նահրաշուբ», որ բառացի նշանակում է քաղաքի հանգստությունը խաթարող<sup>400</sup>:

399 Գերված թուրք պատանիները ծառայում էին արքունիքներում և հշանվոր պատասխանական տներում: Հատկապես նրանց էր հաճեցված իրանմանցների ժամանակ օջարակ և զինի մատուցելու (ժատուլակի) արքունիքներում: Երբեմն տիրակալներն այնպես էին սիրում իրենց պատանիներին և կապվում նրա հետ, որ վերջիվերջ մեծ իրավունքներ էին ստանում: Պատմությանը հայտնի է օրինակ Մահմոդ Ղազնուլիի և Արաքի սիրայից կապը, որը մտադ է գործել նաև պարսից գրականության: Այդ մասին Նեզամի Արուզից գրում է թե սուլթանը, որ «գարեապետ և աստվածային մարտ էր, երկար ժամանակ ընդդիմանում էր Արաքի նյառմանը իր սիրուկրից և պայքարում էր, որ շեքվի աստու օրինական ճանապարհից»: Դեկլարացի Արուզի, 624, աշես, էջ 65: Սուլթանար այդ կապը պատանիների համար ողբերգական վախճան էր ունենում հատկապես արքունի շոջանում: Պահպանվել են պոեզիայի մուշեքեր, մաթեկներ հեղ պատանու ստեղծող, բնույտ բնագործության մասին:

400 Այսիցք՝ ճրաչալի պատանիներ, որոնք իրենց գեղեցկությամբ և աշխատանքի պահից դրսևորած ճնաքով հուզում էին բոլոր սրտեր և գրանդիակ խաթարում քաղաքի հանգիստը: Ճանրաշուբ յուներ ժանրայից տարբերակում և հանդես էր գալիս տարբեր ժանրային մեկույ: Շահ Ֆ. Միլերի Մախաբիի պոեզիան հետագայում մեափորփած «Ճանրաշուբ» նախադրում է (տե՛ս 624-րդ աշխ., էջ 94):

Ճանրաշուբի մասին տե՛ս Ահմադ է Գուլիցի Մանն, Ճանրաշուբ դար սիրափայլ՝ է Ֆարսի, ՔՊՊՐԱՏ, 1967, ինչպես նաև Գրեմանտ Ջաֆար է Մահջուր, Մաքք- է Նուրասանի դար շիր- է Ֆարսի, ՔՊՊՐԱՏ, 1324, ս. 677:

Ա. Մ. Բուկար, Западная Азия, Станбул, 1957, т. 7, с. 11, Мухомов, Из истории культуры и искусства в турецкой литературе, М, 1972, А. Мирзова, Сказки народов Афганистана, 1977, стр. 274, А. К. Кошман, Происхождение поэмы гандиши в развитии поэмы 12 вв. 80Н, С. Эрван, 1984, стр. 43-49:

Ճանրաշուբը համարվելիս բնույթ էր կրում և 15-16-րդ դդ տարածված էր թուրքական, պարսկական, հնդկական, սրբկետական տարածաշրջաններում: Պատմությանը հայտնի մեք Մալիկ Արդուլամի ընդողջման՝ «Տեղիճարարի գրականությունների մեք: Մալիկ Արդուլամի ընդողջման» «Տեղիճարարի» «Ճանրաշուբ» օգտագործվում է ժամանակակիցում այն տեսակի վերաբերյալ, որը անհայտնա պարունակում է Քիշասակություն տնտեսական

Այդ ժանրում Հասկապետ փառ են արտացոլված քաղաքային կոյուրքաբար, քաղաքացու կենցաղը, ինչպես նաև բազմաթիվ ազգագրական Հնաաբբերություններ հայաստանի նյութեր: Քաղաքացու Հանգես գալով և երա զեղազիտական պահանջներին և հաշակի թեյազրանքով պոեզիայում մեծաթրվում է պատկերվողի, պերսոնալի նկատմամբ նոր մտածում, որում իրենապետանցումը, զեղեչիություն զեկորաթիվ նկարագրությունը, երբանաշակ և գարգարանգակ սնը նահանջում են սեպետական տարրերին և պարզեցման առջև<sup>401</sup>: Ինչ վերաբերում է բովանդակության անհատականացմանը, ապա քաղաքային պոեզիայի նմուշներում անհատական սկիզբը ավելի ընդգծված է:

Քաղաքային պոեզիայում ներգրավված են տարբեր խավերի ներկայացուցիչներ, ինչպես նաև տարբեր մասնագիտություններին կրողներ. բանաստեղծ, բժիշկ, մտադործ, ներկարար, զերմակ, վարսավիճ, պաշտար, կոշիկակար, գզակագործ են: Այն անմիջականորեն արտացոլում էր Հենց 12-13-րդ դդ. գարգացող քաղաքի սպիտակական կազմը, անտեսությունը, կոյուրքաբար:

Հերամի, «Արհեստավորական կորստություններին՝ քաղաքներում զբաղեցրած առանձին փողոցները միամտմանակ շուկայի զեղ էին կատարում, քանի որ բացի կիրակնորյա շուկայական օրերին, մնացած օրերին արտադրանքը նույն շարքում էլ վաճառում էր արտադրող արհեստավորը: Նման փողոցներ կամ շարքեր եղել են Հայաստանի շատ քաղաքներում...»<sup>402</sup>: Միջնադարյան քաղաքին բնորոշ քառյակներին մի շարք է պահպանվել 12-

կամ քաղաքական իտեռնալիտրյան մասին կամ էլ սոցիալական տարբեր խավերի մեղադրություն՝ իրականացված նրանցումն, հույների կամ պարսկալարի մեղադրող՝ (տե՛ս Կեռոս Կարոս Կոտայր Թեոթո, Մ., 1985, սր. 62):

401 Ռեալիզմ տերմինը օգտագործել ենք Գ. Լիմալովի «Միջնադարյան ռեալիզմ» հասկացության շրջանակում. «Ռեալիստական տարրերը դերուս սեպիզմ չեն, սակայն ընկած գծերը կարող են արտաբացնել տերմինների մեծավորությունը» (տե՛ս Ա. Շ. Կոտայր, Թեոթոս քաղաքացուս Կոտայր, Մ., 1978, սր. 159):

402 Ռ. Ն. Առաքելյան, Քաղաքների Շար վերելքը 12-13-րդ դդ., (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», 8. 3, էջ 364):

րոչ դարի պարսիկ բանաստեղծ Սուգանի Սամարզանդիի գրված  
 նույն: Չնայած նրա մասին տեղեկությունները սույն են, իսկ գր-  
 վանք, ինչպես նշում է պարսիկ հայտնի բանասեր Մայիզ Նաֆի-  
 սին, առաջ է սխալներով, որ որոշ շարժով բարդացնում է դրանց  
 թարգմանությունը<sup>403</sup>, այնուհանդերձ նրա բանաստեղծություն-  
 ների պատկանելությունը երբեք կասկած չի հարուցել: Սղեյ է  
 գերման, որանդից է սերում է նրա գրական կեցմանունը՝ Սուգա-  
 նի (տանգի վարպետ): Արքունիքում չի ծառայել, սակայն երբեմն  
 ներքողներ է ելքերել այս աշխարհի հզորներին՝ իր անասական  
 գիմանը թեթևացնելու համար: Այդ հանգամանքը մեծապես որո-  
 շել է նրա պոեզիայի բնույթը, քանի որ այն ծառայել է ոչ թե  
 վերնախավին, այլ քաղաքային շուկային, արհեստի մարզկանց և  
 պլերսին: Նրա սոցիալական միջավայրը նոր բովանդակություն,  
 թեմաներ ու մոտիվներ էր հաղորդում պարսից բանաստեղծու-  
 թյանը, ինչը խորթ էր արքունական պոեզիային:

Լվացարար տղան՝ արև դնքով գերում՝  
 Մեր աչքերից հույզի արցունքներ է քերում,  
 Որպեսզի այդ տղան լվացքը լավ անի,  
 Զրին, արևին է հուսով ապավինում<sup>404</sup>:

Գեներացայնությունը, պաշտոնական պոեզիայի «հերոսան-  
 քին» հակառակ ազգահերոսականացումը, կոչորիսը նոր որակ է,  
 որ արտացոլում է նրանց ժամանակակից քաղաքային կյանքը,  
 երբեմն էլ կրում է անմեական-անհատական երանց կամ պոֆե-  
 սիոնայ հետաքրքրություն: Օրինակ՝ Սուգանիի քառյակներից  
 մեկում գովերգվում է Նաջմ անունով մի պատանի, որը իրրե թե  
 նրա հոմանին է եղել (Նաջմ պարսկերեն նշանակում է աստղ՝ փո-  
 խարերական համեմատություն, որ ավանդական է պարսից պոե-  
 զիայում): Ամբողջ բանաստեղծությունը Սուգանին կատուցել է  
 լուսին-աստղ, կոչկակար-Նաջմ բառախաղի, պատկերների գու-

403 Տե՛ս՝ Մազիդ-է Նաֆիսի, Նազմ վա մար դար իրան վա դար գարան-է Ֆար-  
 սի, Թեհրան, ս. 99:

404 «Մարգարեսաշար», էջ 116:

գազրութեան վրա:

Միրուս գերված էր կոշկակարից լուսնադեմ (այն դեպքում),  
երբ Նաշմը (աստղը) ինձ էր տեսնում...<sup>405</sup>

Բա՛վական է մեկ-երկու բեյթ մեջ բերել արքունական բա-  
նասանդ Օնտորիի պոեզիայից, որպեսզի սիրային բովանդակու-  
թյան շեղանքում չլինի Հեա մեկանգ, անմիջապես պարզ գառնա  
միկրոպոստիկայի, ինչպես նաև նկարագրման մեթոդի տարբերու-  
թյունը, սալոնային-գա՛ված և ժողովրդական-քաղաքային ար-  
վեստների Հակազրությունը, գերհատվածի և Հասարակ ժողովրդի  
գեղագիտական շափանիչների լուծյունը:

Շինչատ բուի, քաղցր լիզվի, սադափ մարմնի տեր ևս դու,  
Քար սրտի, արծաթ կրծքի, ոսկե գուռու տեր ևս դու...<sup>406</sup>

Կամ

Խուպուզդ հարեչ շահին է նման (սև), ո՛վ պայծառ  
լիալուսն,

Թագ է նա համագարից (սև, քուրազետ)

Կակաչ գամի (դեմք) համար,

Գու սուզնի ևս վարդերեւո՞՞ ձյութի (խուպուզներ) մեք,

Ես սուզնի եմ հափրուկը<sup>407</sup> (դեմքս ձարյուն-արքունցի մեք:

Բայր արտաահայտամիջոցները ուղղված են շքեզութեան ա-  
ռարկաներին: Նրբաճաշակ պատկերները, բարդ ալլաբրանու-  
թյունները ստեղծում են յուրահասուկ սեմանտիկական գաշտեր:

Ա. շահ, թագ, գահ - իշխանություն ունի

Բ. կակաչ, վարդ, Հափրուկ - բուսական աշխարհ

Գ. պայծառ, կարմիր, արեապույն - գույնի աշխարհ

Ամեն ինչ նրբաճաշակ է, բացի մյուսից, որը ի Հայտ է կկնչ  
միայն Հանգը ազանովիս Համար (մանիր-գարիր-զիր) և յուրա-

405 Նիզամ-է Մուզաննի, Թեհրան, ս. 389

406 Տե՛ս Օնտորի, Գիվան, էջ 197:

407 Ռուս, որը իբրև դեմք ներկ է ծառայում (Օնտորի, Նիզամ, էջ 191):

տեսակ Հաժաժարակչութուն է ապիտ բանաստեղծության ողջ  
 ՀակաՔնկային բնույթին: Հետաքրքիր է բանաստեղծության ա-  
 վարտը, որտեղ քնարական հերոսը արեաշագախ արցունքներ է  
 թափում: Դժգոյ է Հաժաժայ նրա անկեղծութանը, գրամատիզ-  
 մը կարենկանք չի առաջացնում: Հայոց մեջ մեզ արզեն ծանօթ  
 (տես Չորջ գլուխ) գեկորատիվ սիրս որինակները նույն պատկերն  
 են գծագրում: Դրանք Հեղկական միջնադարյան գրականության  
 մեջ նույնպես առկա այն տեսակն են, որոնք որակված են այս-  
 պես. «Դրանցում ոչ վիշտն է բնկալվում որպես վիշտ, ոչ սերը՝  
 որպես սեր»<sup>438</sup>:

Օնտորիի, Հովհաննես Թլկուրանցու, Գրիգորիս Ազիմաժար-  
 ցու սիրային բանաստեղծություններում շկա շարժում, շկան այլ  
 հերոսներ: Ընդհանուր խորքը շքեղության առարկաներն են  
 (մուշկ, համպար, սև սաթ, բյուրեղապակի, սամույր, սակի, ար-  
 ծաթ), որոնք քաղաքային քառյակում փոխարինվում են Հասա-  
 բակ, ամենորյա առարկաներով տեղ, թեչ, թաս, ժանդազ, կշեռք  
 են: Մարգարտաճառի կերպարին փոխարինելու է գալիս  
 «մրգավաճառի» կերպարը: Եթե արքունական բանաստեղծը գի-  
 տավորյալ բարդացնում ու զարգարում էր իր խոսքը, ապա քա-  
 ղաքային արվեստի ներկայացուցիչը գիտավորյալ պարզեցնում  
 էր այն: Եթե արքունական ծափալուն ժանրային մեներում (գառի-  
 գն) փաստական-ինքնակենսագրական նյութն անզամ սրտացու-  
 չում էր արքունական կոյրերիս, բարձրաշխարհիկ խափ կենցա-  
 ցը, ապա այս դեպքում գրանք զառնում էին քաղաքային միջ-  
 վայրն արտացոլող փոքրիկ զբօսայրեր: Վերջինս կրթմն այնքան  
 էական է գտնուում, որ, ոչինակ, Սուզանի Սամարգանդիի գրվանի  
 հիման վրա վերականգնվել է բազմաթիվ արհեստավոր-բանաս-  
 տեղծների անձը, այն պարագայում, երբ նրանք նույնիսկ չեն հի-  
 շատակվել բարեխիղճ մատենագիրների ձուգվածուներում<sup>439</sup>, ա-

438 A. Beizem, Կյոն, «Littérature Oulsa Héroïque», M., 1974, стр. 644.

439 Գարսից միջնադարյան ժողկրթությանը կապում էն թաղային: Դրանք  
 Օսն Քակիթն կենսագրական անդեկորացուցնք էն հաղորդում բանաստեղ-  
 ծի մասին:



բիծակ՝ Հանային (Հինա պատրաստող), Աբրեչուսին (մետաքսագործ), ևն<sup>410</sup>: Կենցաղայնութունը մի կոր շրջան էր երկու գրականությունների զարգացման պատմության մեջ, որը առավել բնոյզնական է փոքր ժանրային ձևերում:

Հայրեն.

Քո կարճ ի Հայեպ քաղաքն  
Ի շուկան շէքեր կու ծախել.  
Անոնք է կշնոք արել՝  
Ունքերովն իր վեր կու քաշել.  
-Օնքրին գինն ալ հրամէ  
-Պագ մը տոր և շուտ խալըսէ<sup>411</sup>:

Մահաբեր.

Ղասարս մի մորթուց քաշեց, հանեց դմակը.  
Վերջրեց մեղքն ու առաց. -Փառ-փառ, Ի՛՛՛՛՛՛՛ լալմ է-  
Ինն ու ինն. -Մի դրա ախորժակին նայեր.  
Այդ դմակով (որ ինքն ունի) դմակ է ցույց տալիս-<sup>412</sup>:

Սա ուղղամիտ և նշմարիտ ժողովրդական երգիծանք է, աշխույժ և զգարեալի շուկայի առարխ: Կարելի է ենթադրել, որ այն առավել է մի առիթով, էքսպրամտով: Ետբանականութունը պարզ է բառարանը՝ ժամանակակից: Պատմականութունը բնոյզնական է ուղղակի խոսքի մուտքով:

Մահաբեր.

Ով դասարս, քո (սիրո) դարդից ևս եկում եմ,  
Մինչև դամակը ոսկորիս հասնի՝ համբերում եմ:  
Քո օրհնքն է, որ մորթես ու ծախես.  
Աստուծո սիրուն, մորթիր, բայց մի ծախիր...<sup>413</sup>

410 Տե՛ս Ա. Շահյան, *Երեսն և ամառանկար լեռնային տղամարդիկ* և 12 առ. Ապրիլ-մայիս 1971 թվական, Երևան, 1971, էջ 4:

411 Հայրենցիկ, էջ 50:

412 Մահաբեր, Գրված, էջ 25:

413 Կույմ տեղում, էջ 33:

Արևելյան շուկան իր ասորիբուսներով մտնում է գրահանու-  
թյուն, քաղաքային հրապարակի և Թաղամասերի (մահալ, քուշի)  
«հերոսը» դառնում է բանաստեղծականացման նյութ: Վերջ բեր-  
ված որինակների մերկ կառույցը հետևյալն է.

Հայրենի	Քառյակ
Սոցիալական վարչական մարմին	
Քաղաք (Հալեպ)	Քաղաք (գասարի գործի վայր)
Հերոս	
յար	գասար
Պորձուենու քյան վայր	
շուկա	շուկա (մտի վանաքի վայր)
Պորձուենու քյան տեսակ	
վանաք	վանաք, մորթ
Վանաքի առարկա	
շաբաթ	միս
Վանաքի գործիք	
կշեռք	գանակ

#### Մահասթի.

Մսագործը իր սովորույթի համաձայն  
Ինձ սպանեց և ասաց. -Մա իմ գործն է.-  
Հետո զլուխը գրեց ուսքերիս ու ներում հայցելով.  
Փշեց, որպեսզի (նեշա) հանի կաշիս<sup>414</sup>.

Ինչ իտաք, աշխարհական են բերված որինակները՝ կառույց-  
ված արհեստների և մասնագիտական գործունեությունների տերմին-  
ների վրա: Պաշտոնական պոեզիայից մեկ մանրթ աշք-հանք  
չարչրկված Համեմատության առարկաները հայրենում բացար-  
ժակ ետ չուծում են ստանում, ծավալուն փոխարեությունը մի

414 Մահասթի. Դիվան, էջ 25. Ք. Մշխրը նշված աշխատության մեջ վերջին ըն-  
թը համարյալ անա է համարում:

շարժուն պատկեր է ստեղծում Համասեքստի բոլոր մակարդակներում և սեական, և գաղափարական: Ետքը խաղաղություն է աշխարհը այնպես, ինչպես խաղում են կեն ձողից կախված կշեռքի թափերը: Այս գեղարվեստ Հանքը բացի իր սովորական պատկերից կորուսվում է, արտահայտում է շրջապատի մի Հասկանիչ և շարժում: Եթե անկամ ինքնակենսագրական երանգ է կրում գասարի Համասորեն կրկնվող կերպարը Մահաթիի քառյակներում, աշուհանդեր, անխառնի է այն փաստը, որ Հանսպարջա կենցաղը Հեղինակային վերաբնասափորումը, երգիական երանգներով թափանցում է պոեզիա, մեափորում լեզուն և ուր, պատկերափորման ողջ Համակարգը: Բանաստեղծականացման որոշիչների կորուսվ փոփոխությունը իր Հետ բերում է պրոպագանդներ, վուլգարիզմներ, ընդգծված Լատուրալիստական պատկերներ: Մասպործի կերպարը ավյալ Համասեքստում (չստան սիրեցյալ) վերականգնում է մեկ արգան Հայտնի կանոնարկված գույնգույնություններ, կապված սիրո, ցավի, վշտի, մի խոսքով շափազանցված ցավային-որգանական գզացումների Հետ, այն, ինչը բնորոշ էր արքունական պոեզիային (սիրուց գեղեցիկ գեմք, կորացած մեջք են): Այս քառյակը Հին, ավանդական պատկերի նոր տարրերակն է: Մի Հանգամար, որ մեկ անկամ ևս ընդգծում է քառյակում կանոնի և ավանդույթի ուժը: Ինչ վերաբերում է լեզվին, այս անհնայտ է պարզ, կենցաղային ուր: Այնպե՛ս 25 բառային միափորից 10-ը կենցաղային են, մտազործ, արՀնատ, գործ, կաշի, սուր, գլուխ, տաղաչել, սղանել, Հանել, փչել: Նոր Հերոսների Հանգես գալով, երանց շարժունությունը փոքր ժանրային մե են մուտք գործում ոչ բարդ պատմություններ, ստեղծվում է իրավիճակ: Դրան նպաստում է նաև երկխոսություն և սյուժետառնություն փոքր ժանրային մեներ, որը կրկնական որոշ երանգ է Հարդրում բանաստեղծությունը: Կենցաղային, Հետաքրքրաշարժ սյուժեների ու թեմաների մուտքը պոեզիա և երանց ընդհանրությունները Հայոց և պարսից մեջ փուլային-արպարական երևույթ են, «...երբ առանձին ստեղծագործություններ, ժանրեր և ոճեր, որոնք ուղղակի ազդեցություններով

չեն կապված իրար հետ, սակայն ի հայտ են բերում առաջիկ կամ պակաս եմանություն գծեր՝ պայմանավորված սոցիալ-պատմական պայմաններով»<sup>115</sup>:

